ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1952 Общественные науки

Ա. Հակոբյան

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅ ԱԶԳԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Մեր ժամանակի մեծագույն թեորետիկ, մեծ Լենինի գործի հանճարեղ շարունակող ընկեր Ստալինը անդադրում զարգացնում և հարստացնում է մարքսիստական-լենինյան թեորիան: Ընկեր Ստալինի աշխատությունները, որոնք պատասխան են տալիս բանվոր դասակարգի, ազատագրական լայն մասսաների ռևոլյուցիոն պայքարի ամենակտուալ ու ամենակարևոր հարցերին, խոշորագույն ներդրում են մարքսիզմ-լենինիզմի գանձարանում և նոր, ավելի բարձր աստիճանի են հասցնում այդ ուսմունքը: Նրանք հանդիսանում են ստեղծագործական մարքսիզմի փայլուն օրինակներ, հագեցված են ստալինյան տրամաբանության անհաղթահարելի ուժով, անգերազանցելի գիտական խորությամբ, պարզությամբ ու գիտական կանխատեսությամբ:

Մեծ Ստալինի կլասիկ աշխատությունները հզոր զենք են հանդիսանում Լենինի-Ստալինի փառապանծ պարտիայի ձեռքում կոմունիզմի համար մղվող պայքարում: Այդ հանճարեղ աշխատությունները դարձել են ոչ միայն մեր լայնածավալ Սովետական Հայրենիքի բազմամիլիոն աշխատավորների սեփականություն, այլև՝ ամբողջ աշխարհի առաջավոր մարդկության, որը պայքարում է իմպերիալիստական ռեակցիայի դեմ՝ հանուն դեմոկրատիայի և ազատության:

Հսկայական են ընկեր Ստալինի ծառայություններն ազգային հարցի վերաբերյալ մարքսիստական-լենինյան թեորիայի ստեղծման և զարգացման գործում, թեորիա, որը կարևորագույն զենք է հանդիսանում բոլշևիկների պարտիայի գաղափարական զինանոցում: Սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակով և այդ թեորիայի կենսագործմամբ Սովետական Միությունում վերջնականապես լուծված է մեր ժամանակի ամենադժվարին պրոբլեմներից մեկը՝ լիկվիդացված է անվստահությունը և թշնամանքը մեր երկրի ժողովուրդների միջև, որը դարեր շարունակ հրահրել և արմատավորել էին շահագործող դասակարգերը: Ձեռք է բերված Սովետական Միության բոլոր ազգերի ու ժողովուրդների անխախտ եղբայրությունը և բարեկամությունը, որը հենված է այդ ազգերի ու ժողովուրդների սուվերեն իրավահավասարության ու փոխադարձ վստահության վրա:

Ժողովուրդների եղբայրության ու բարեկամության՝ լենինյան-ստալինյան ուսմունքի կենսագործումը Սովետական Միությունում դեռևս միջազգային հսկայական նշանակություն: Մեր երկրի ժողովուրդների օրինակով իրենց ազատության ու անկախության համար կապիտալիստական շահագործման դեմ պայքարի են դուրս եկել բազմաթիվ ժողովուրդներ՝ աշխարհի բոլոր մասերում: Սովետական Միության եղբայրական օգնությամբ կապիտալիստական սիստեմից անջատվեցին ու ներկայումս սոցիալիզմի ուղու վրա են կա[illegible]ն, Չեխոսլովակիայի, Բուլգարիայի,

Ռումինիայի, Հունգարիայի և Ալբանիայի ժողովուրդները։ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ազատագրական պայքարում համաշխարհային-պատմական խոշոր հաղթանակ է ձեռք բերել չին մեծ ժողովուրդը։ Իրենց ազատության ու անկախության համար հերոսական պայքար են մղում Կորեայի, Վյետնամի, Ինդոնեզիայի և շատ այլ երկրների ժողովուրդներ։

Մարքսիզմ-լենինիզմը ուսուցանում է, որ «ազգային հարցը պրոլետարական ռևոլյուցիայի ընդհանուր հարցի մի մասն է, պրոլետարիատի դիկտատուրայի հարցի մի մասը»[1]։ Հետևաբար՝ այդ հարցի լուծումն անհնարին է առանց պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի, առանց կապիտալիզմի տապալման և առանց պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման։

Պրոլետարիատի մեծագույն ուսուցիչներ Մարքսը և Էնգելսը իր ժամանակին հիմնավորելով ամենառևոլյուցիոն դասակարգի՝ պրոլետարիատի պատմական դերը որպես կապիտալիզմի գերեզմանափորի, «Կոմունիստական պարտիայի մանիֆեստում» նշել են, որ միայն պրոլետարիատի իշխանության հաստատմամբ հնարավոր է լիկվիդացնել ազգային մեկուսացածությունը, ազգերի ու ժողովուրդների հակադրությունը և ազգային ճնշումը։

Բոլշևիկների պարտիայի հանճարեղ հիմնադիրներ Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը բազմակողմանիորեն մշակեցին և գիտականորեն հիմնավորեցին մեր պարտիայի թեորիան և քաղաքականությունը ազգային հարցում, քաղաքականություն, որը մարմնավորված է Սովետական Միության՝ մեր հզոր սոցիալիստական բազմազգ պետության 34 տարիների ընթացքում ձեռք բերած համաշխարհային-պատմական նվաճումների մեջ՝ կոմունիստական հասարակակարգի կառուցման գործում։

«Ռուսական մարքսիստները վաղուց արդեն ունեն ազգի իրենց թեորիան»[2]—նշում է ընկեր Ստալինը 1929 թվականին գրած և 1949 թվականին առաջին անգամ լույս տեսած «Ազգային հարցը և լենինիզմը» կլասիկ աշխատության մեջ։

Ընկեր Ստալինի այս հանճարեղ աշխատությունը օրգանապես կապված է ազգային հարցի թեորիական մշակման ուղղությամբ նրա նախորդ տարիների երկարատև աշխատանքի ու պայքարի հետ։

Այս աշխատությունը, որն ընդհանրացնում է բոլշևիկների պարտիայի ազգային քաղաքականության կենսագործման արդյունքները, սերտորեն շաղկապված է 1913 թվականին ընկեր Ստալինի գրած «Մարքսիզմը և ազգային հարցը» աշխատության հետ և ելնում է նրա դրույթներից, հանդիսանում է այդ դրույթների զարգացումն ու հարստացումը՝ նոր տվյալներով ու նոր եզրակացություններով։

Այդ երկու աշխատություններն իրարից բաժանվում են պատմական մի ամբողջ ժամանակաշրջանով, որի ընթացքում, Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակով՝ լենինյան-ստալինյան թեորիան ազգային հարցի մասին, իրականացվեց կյանքում և փայլուն կերպով ապացուցեց իր կենսականությունը։ Այդ ժամանակաշրջանում ընկեր Ստալինը

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 6, Երևան, 1948 թ., էջ 163։
[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 11, Երևան, 1949 թ., էջ 379։

բազմակողմանիորեն զարգացրեց բոլշևիկների պարտիայի թեորիան ու ծրագիրը ազգային հարցի վերաբերյալ իր մի շարք զեկուցումներում և աշխատություններում։ Դրանցից են՝ ընկեր Ստալինի զեկուցումները ազգային հարցի մասին՝ պարտիայի ապրիլյան կոնֆերանսում (1917 թ.), պարտիայի 10-րդ համագումարում (1921 թ.). 12-րդ համագումարում (1923 թ.), ընկեր Ստալինի մի շարք հոդվածները՝ «Հոկտեմբերյան հեղաշրջումը և ազգային հարցը» (1918 թ.), «Սովետական իշխանության քաղաքականությունը ազգային հարցի վերաբերմամբ Ռուսաստանում» (1920 թ.), «Ազգային հարցի դրվածքի շուրջը» (1921 թ.), ընկեր Ստալինի ելույթները ՌԿ(բ)Պ ԿԿ-ի չորրորդ խորհրդակցությանը ազգային ռեսպուբլիկաների ու մարզերի պատասխանատու աշխատողների հետ (1923 թ.), «Լենինիզմի հիմունքների մասին» (1924 թ.) կլասիկ աշխատությունը ու մի շարք այլ աշխատությունները։

Ընկեր Ստալինի «Ազգային հարցը և լենինիզմը» աշխատությունը հանդիսանում է ստեղծագործական մարքսիզմի գեղեցիկ օրինակ։ Այս կլասիկ աշխատությամբ ընկեր Ստալինը մարքսիստական գրականության մեջ առաջին անգամ առաջ քաշեց նոր, սոցիալիստական ազգերի հարցը, որոնց կազմավորվել են Սովետական Միությունում բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ, ցույց տվեց սոցիալիստական ազգերի էությունը, նրանց կենսունակությունը և սկզբունքային տարբերությունները բուրժուական ազգերից։ Այս աշխատության մեջ ընկեր Ստալինը գիտականորեն հիմնավորել և ցույց է տվել, թե ինչպես և դեպի ուր կարող են ընթանալ սոցիալիստական ազգերն իրենց զարգացմամբ։ Ելնելով բոլոր երկրներում կոմունիզմի հաղթանակի անխուսափելիությունից, ընկեր Ստալինը ինչպես այս, նույնպես և «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» կլասիկ աշխատությունների մեջ կանխատեսում է համաշխարհային հասարակական զարգացման հիմնական էտապները բոլոր երկրներում սոցիալիզմի հաղթանակից հետո և ուրվագծում է ազգերի ու ազգային լեզուների հետագա զարգացման հեռանկարները՝ համապատասխան այդ էտապների։

* * *

«Մարքսիզմը և ազգային հարցը» աշխատության մեջ ընկեր Ստալինը, ստեղծագործորեն կիրառելով մարքսիստական դիալեկտիկական մեթոդը ազգային հարցում, հիմնավորապես մշակել է մարքսիստական-լենինյան թեորիան ազգային հարցի վերաբերյալ։ Այստեղ ցույց է արված, թե ինչպես են ծագել ու ձևավորվել բուրժուական ազգերը։ Տվյալ դեպքում մեր խնդիրը չէ մանրամասն կերպով կանգ առնել այդ հարցի վրա։ Սակայն մեզ հետաքրքրող խնդիրը պարզաբանելու տեսակետից անհրաժեշտ է սեղմ կերպով տալ այդ հարցի էությունը։

Ընկեր Ստալինը սովորեցնում է, որ ազգը պատմական կատեգորիա է, որը ծագել է ֆեոդալիզմի քայքայման և կապիտալիստական հասարակակարգի առաջացման պրոցեսում։ «Ազգը մարդկանց պատմականորեն կազմավորված կայուն ընդհանրությունն է, որ ծագել է լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և կուլտուրայի ընդհանրության մեջ դրսևորվող հոգեկան կերտվածքի ընդհանրության բազայի վրա»։[1] Այդ հատկանիշներից մեկի կամ

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 2, Երևան, 1947 թ. էջ 346։ Ընդգծումը բնագրինն է։

մյուսի բացակայության դեպքում ազգ լինել չի կարող։ Միաժամանակ ընկեր Ստալինը ցույց է տալիս, որ «ազգի տարրերը—լեզուն, տերիտորիան, կուլտուրական ընդհանրությունը և այլն—երկնքից չեն ընկել, այլ ստեղծվել են կամաց-կամաց, դեռ մինչ կապիտալիստական ժամանակաշրջանում»[1]։

Ընկեր Ստալինը սովորեցնում է, որ սխալ կլինի փնտրել ինչ որ նոր, 9-րդ հատկանիշը ազգի բնորոշման համար, ինչպես փորձում են կատարել ոմանք, այն է՝ առանձնացված ազգային սեփական պետության առկայությունը։ Ընկեր Ստալինը գրում է, որ հարցի այդպիսի դրումը «...անխուսափելիորեն հանգեցնում է ազգային, իմպերիալիստական ճնշման արդարացմանը, ճնշում, որի կիրառողները վճռականապես իսկական ազգեր չեն համարում իրենց առանձին ազգային պետությունները չունեցող ճնշված և ոչ-լիիրավ ազգերին և գտնում են, որ այդ հանգամանքը նրանց իրավունք է տալիս ճնշելու այդ ազգերին»[2]։

Ընկեր Ստալինը սովորեցնում է, որ տարբեր երկրներում՝ բուրժուական ազգերը կազմավորվել են տարբեր ժամանակաշրջաններում՝ համապատասխան յուրաքանչյուր երկրի զարգացման ընթացքի և աստիճանի։ Խոսելով վրաց ազգի, որպես բուրժուական ազգի ձևավորման մասին, ընկեր Ստալինը գրում է. «...Վրաստանը, որպես ազգ երևան եկավ միայն XIX դարի երկրորդ կեսին, երբ ճորտատիրության անկումը և երկրի տնտեսական կյանքի աճումը, հաղորդակցության ճանապարհների զարգացումը և կապիտալիզմի առաջացումը աշխատանքի բաժանում հաստատեցին Վրաստանի մարզերի միջև, վերջնականապես խախտեցին իշխանությունների տնտեսական պարփակվածությունը և նրանց շաղկապեցին որպես մեկ ամբողջություն։

Միևնույնը պետք է ասել նաև ֆեոդալիզմի ստադիան անցած և իրենց մոտ կապիտալիզմ զարգացրած մյուս ազգերի մասին»[3]։

Պետք է նշել, որ ընկեր Ստալինի այս խոսքերը հավասարապես վերաբերում են նաև հայ ազգի ծագմանը և կազմավորմանը, որովհետև 19-րդ դարի երկրորդ կեսին Վրաստանի և Արևելյան Հայաստանի զարգացման աստիճանը և սոցիալ-տնտեսական պայմանները համարյա նույնն էին։ Ե՛վ Վրաստանում, և՛ Արևելյան Հայաստանում տեղի ուներ ֆեոդալիզմի քայքայումը և կապիտալիստական հարաբերությունների զարգացումը։ Իսկ եթե կային որոշ տարբերություններ, ապա դրանք այնքան չնչին էին, որ ազգի ծագման և ձևավորման գործում էական նշանակություն ունենալ չէին կարող։ Ահա այդ է պատճառը, որ ընկեր Ստալինը նույն աշխատության մեջ մի այլ տեղ՝ խոսելով բուրժուական ազգերի կազմավորման մասին, նշում է, որ Ռուսաստանում իրրև ազգեր կազմավորվում են լատիշները, լիտվացիները, ուկրաինացիները, վրացիները, հայերը և ուրիշները։

Այսպիսով, հայերը որպես բուրժուական ազգ, կազմավորվել են վրացիների հետ միաժամանակ, 19-րդ դարի երկրորդ կեսին։

---

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 11, Երևան, 1949 թ., էջ 382։
[2] Նույն տեղում, էջ 381։
[3] Ի. Ստալին, Երկեր, հատ. 2, էջ 345։
[4] Նույն տեղում, էջ 356։

Եվ իրոք, երբ մենք նայում ենք Հայաստանի (ավելի ճիշտ Արևելյան Հայաստանի) սոցիալ-տնտեսական վիճակին, ապա պարզ է դառնում, որ 19-րդ դարի երկրորդ կեսին, հատկապես 60-ական թվականներին Ռուսաստանում տեղի ունեցած տեղաշարժերը կապիտալիստական զարգացման ուղղությամբ, իրենց ազդեցությունն են ունեցել նաև նրա ծայրամասը հանդիսացող Անդրկովկասի ու Հայաստանի վրա։ Ճիշտ է, ցարական Ռուսաստանում կապիտալիզմի զարգացումը համեմատաբար ավելի արագ և ուժեղ էր ընթանում, քան նրա գաղութում՝ Հայաստանում, բայց փաստ է, որ այստեղ ևս մուտք էր գործել կապիտալիզմը և տեղի էր ունենում ֆեոդալիզմի քայքայման պրոցեսը։ 19-րդ դարի վերջին քառորդում Անդրկովկասում սկսում է արագորեն զարգանալ կապիտալիզմը, որի հետևանքով ուժեղանում է բանվորների ու գյուղացիների շահագործումը, ազգային-գաղութային ճնշումը[1]։ Խոսելով այդ ժամանակաշրջանի մասին, Վ. Ի. Լենինը գրում է. «Այսպիսով ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության ճնշումը, հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում։ Հետռեֆորմյան ժամանակաշրջանի սկզբին նոսր բնակավորված կամ լեռնականներով բնակավորված երկիրը, որոնք համաշխարհային տնտեսությունից և նույնիսկ պատմությունից դուրս էին կանգնած, դառնում էր նավթարդյունաբերողների, գինու առևտուր անողների, ցորենի ու ծխախոտի ֆաբրիկանտների երկիր...»[2]։

1870 թվականին Արևելյան Հայաստանում և Ադրբեջանում տեղի ունեցած ագրարային գյուղացիական ռեֆորմը (որը Վրաստանում տեղի էր ունեցել 1864 թվականին), իր բնույթով բուրժուական ռեֆորմ էր։ Նրա կիրառումով Հայաստանում մի շարք նախադրյալներ ստեղծվեցին կապիտալիզմի զարգացման համար։

Ցարիզմն իր գաղութային նպատակներով այդ ժամանակ Անդրկովկասում և Հայաստանում խոշոր աշխատանքներ են կատարում ճանապարհաշինարարության ուղղությամբ։ 1871—1872 թվականներին կառուցվում են Թիֆլիս—Հարաքիլիսա—Երևան խճուղին, ապա Երևան—Ջուլֆա, Ղարաքիլիսա—Ալեքսանդրոպոլ, Ալեքսանդրոպոլ—Կոզր և Նախիջևան—Ռորիս խճուղիները[3]։ 1872 թվականին գործարկվում է Անդրկովկասում առաջին երկաթգիծը՝ Թիֆլիս—Փոթի։ Տասնմեկ տարի հետո՝1883 թվականին ավարտվում է Բաքու—Իաթումի երկաթգիծը, 1899 թվականին՝ Թիֆլիս—Ալեքսանդրոպոլ—Կարս երկաթգիծը[4]։ Հայաստանում գյուղատնտեսության մեջ զարգանում էր բամբակի արտադրությունը, այգեգործությունը, մասնավորապես խաղողի մշակությունը, որը խոշոր բազա էր գինու, կոնյակի և սպիրտի արտադրության համար։ 1880-ական թվականներին արդեն շահագործվում էին

---

[1] Տես Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալին, Համառոտ կենսագրություն, Երևան, 1947 թ., էջ 6։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, Երևան, 1947 թ., էջ 771։

[3] Տես Հայկական ՍՍՌ Գիտ. ակադեմիայի Հասարակական գիտ. բաժանմունքի Տեղեկագիր, № 10, 1946 թ., պրոֆ. Մ. Ներսիսյանի հոդվածը, էջ 37։

[4] Նույն տեղում։

Ալավերդու և Ղափանի պղնձահանքերը, կազմակերպվում էր մեսաքսի և կաշվի արտադրությունը։ Այդ բոլորին զուգընթաց զգալի չափով սկսում էր ծավալվել ներքին և արտաքին առևտուրը։ Ռուսաստանից և Եվրոպայից ներմուծված ապրանքները վաճառվում էին ներքին շուկայում և աստիճանաբար դուրս մղում արհեստավորական արտադրանքը, քայքայելով ֆեոդալիզմին հատուկ արհեստավորությունը և համքարությունները։ Կապիտալիզմի զարգացման զուգընթաց, ինչպես Անդրկովկասում, նույնպես և Հայաստանում (համեմատաբար ավելի դանդաղ կերպով) սկսում են զարգանալ քաղաքները։ 1865 թվականին Երևանն ուներ 14,070 բնակիչ, Ալեքսանդրոպոլը՝ 16,814 բնակիչ։ 1897 թվականին այդ թվերը ավելանում են և հասնում՝ Երևանում 29023-ի, Ալեքսանդրոպոլում՝ 32230 ի[1]։

Չնայած կապիտալիստական զարգացման ուղղությամբ կատարված նման տեղաշարժերին, Արևելյան Հայաստանը ամբողջ Անդրկովկասի հետ միասին երկար ժամանակ, նույնիսկ մինչև սովետական կարգերի հաղթանակը, դեռևս շարունակում էր մնալ հետամնաց ագրարային երկրամաս՝ ֆեոդալական-ճորտատիրական շատ մնացորդներով։ Խոսելով այդ մասին, 1918 թվականին ընկեր Ստալինը գրել է. «Անդրկովկասի մյուս, ոչ պակաս բնորոշ գիծը նրա անտեսական հետամնացությունն է։ Եթե չհաշվենք Բաքուն, երկրամասի այդ արդյունաբերական օազիսը, որը գլխավորապես արտաքին կապիտալով է շարժվում, ապա Անդրկովկասը ներկայացնում է մի ագրարային երկիր ավելի կամ պակաս զարգացած առևտրական կյանքով ծայրամասերում, ծովերի ափերին, և զուտ ճորտատիրական կացութաձևի դեռևս ամուր մնացորդներով կենտրոնում»[2]։

Կապիտալիստական հարաբերությունների զարգացման ուղղությամբ Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները իրենց ազդեցությունն են թողել նաև կուլտուրական կյանքի վրա և համապատասխան փոփոխություններ մտցրել նրա մեջ։ 1850—1860-ական թվականներին զարգացում է ապրում հայ մամուլը, թատրոնը, հաղթանակում է աշխարհաբար գրական լեզուն, դրա հետ միասին զարգանում է աշխարհիկ գրականությունը։

Բուրժուական ազգերի զարգացման այդ շրջանում՝ նրա ղեկավարող ուժը հանդիսացել է բուրժուազիան՝ հանձինս իր նացիոնալիստական պարտիաների։ Բուրժուական ազգերի մասին ընկեր Ստալինը գրում է. «Դասակարգային խաղաղություն ազգի ներսում հանուն «ազգի միասնության», իր ազգի տերիտորիայի ընդարձակում ուրիշների ազգային տերիտորիաները գավթելու միջոցով, անվստահություն ու ատելություն դեպի ուրիշ ազգերը, ազգային փոքրամասնությունների ճնշում, միասնական ճակատ իմպերիալիզմի հետ,—այս է այդ ազգերի իդեական ու սոցիալ-քաղաքական բագաժը»[3]։

Միաժամանակ ընկեր Ստալինը սովորեցնում է, որ այդպիսի ազգերի բախտը կապված է կապիտալիզմի բախտի հետ, որ կապիտալիզմի կործա-

---

[1] Տես Հայկական ՍՍՌ ԳԱ Հասարակական գիտ. բաժանմունքի Տեղեկագիր № 10, 1946 թ., պրոֆ. Մ. Ներսիսյանի հոդվածը, էջ 40։

[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, Երևան, 1948 թ., էջ 58—59։

[3] Ի. Ստալին, Երկեր, հատ. 11, Երևան, 1949 թ., էջ 384։

նումով, նրա հետ միասին պատմական արենայից վերացվելու են նաև նրա ծնունդ բուրժուական ազգերը։

Զարգացման հետագա ընթացքը ամրողջությամբ հաստատեց ստալինյան այդ դրույթը՝ բուրժուական ազգերի բախտի, նրանց պատմականորեն անցողիկ բնույթի մասին։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիան, որը Ռուսաստանում տապալեց շահագործող դասակարգերի տիրապետությունը և հաստատեց պրոլետարիատի դիկտատուրա, ազատագրեց նախկինում ճնշված ազգերին, դրանով իսկ ստեղծեց բոլոր անհրաժեշտ նախադրյալները մեր երկրում եղած նախկին բուրժուական ազգերը հիմնովին վերափոխելու համար՝ սկիզբ դնելով նոր, սոցիալիստական ազգերի կազմավորմանը։

Սովետական երկրում սոցիալիստական ազգերի կազմավորումը սերտորեն շաղկապված է սոցիալիզմի հաղթանակների ծավալման ու ամրապնդման և կապիտալիզմի մնացորդների լիկվիդացման հետ, հաղթանակներ, որոնք ձեռք են բերված Լենինի—Ստալինի պարտիայի ղեկավարությամբ՝ նրա ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ։ Որպես անմիջական արդյունք այդ մեծագույն հաղթանակների, հին, բուրժուական ազգերի բազայի վրա առաջացել են նոր, սոցիալիստական ազգեր։ «Այդ նոր ազգերը,—գրում է ընկեր Ստալինը,—ծագեցին և զարգացան հին, բուրժուական ազգերի բազայի վրա կապիտալիզմի լիկվիդացման հետևանքով,— նրանց սոցիալիզմի ոգով արմատապես վերափոխելու միջոցով։ Ոչ ոք չի կարող ժխտել, որ Սովետական Միության այժմյան սոցիալիստական ազգերը—ռուսական, ուկրաինական, բելոռուսական, թաթարական, բաշկիրական, ուզբեկական, ղազախական, ադրբեջանական, վրացական, հայկական և մյուս ազգերը—արմատապես տարբերվում են հին Ռուսաստանի համապատասխան հին, բուրժուական ազգերից ինչպես իրենց դասակարգային կազմով և հոգևոր կերպարանքով, այնպես էլ իրենց սոցիալ-քաղաքական շահերով ու ձգտումներով»[1]։

* * *

Այժմ փորձենք սեղմ կերպով ծանոթանալ այն հարցին, թե ինչպես է ընթացել հայ ազգի՝ որպես սոցիալիստական ազգի ծագման և կազմավորման պրոցեսը։ Հասկանալի է, որ այդ պրոցեսը չի կարելի պատկերացնել և նրա մասին ճիշտ հետևությունների հանգել՝ առանց այն դիտելու Սովետական Միության ընդհանուր հաջողությունների հետ սերտորեն շաղկապված, առանց նկատի առնելու ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ սովետական ժողովուրդների ձեռք բերած լենինյան-ստալինյան բարեկամությունը։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի հաղթանակից երեք տարի հետո՝ 1920 թվականի նոյեմբերի 29-ին սոցիալիստական ռևոլուցիայի հանճարեղ առաջնորդներ Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի ցուցումներով, ռուս ժողովրդի, նրա հերոսական 11-րդ բանակի օգնությամբ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները տապալեցին հայ բուրժուազիայի և օտարերկրյա իմպերիալիստների կամակատար դաշնակների բուրժուա-

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 386։

նացիոնալիստական տիրապետությունը և Հայաստանում հաստատեցին սովետական կարգեր։ Այդ՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի շարունակությունն ու հաղթանակն էր մեզ մոտ՝ Հայաստանում։ Այդ պատմական հաղթանակով հայ ժողովուրդը փրկվեց վերահաս կործանումից։ Նա ձեռք բերեց իր ազատությունն ու անկախությունը։

«Տապալելով կալվածատերերին ու կապիտալիստներին,— ասում է ընկեր Ստալինը,— Հոկտեմբերյան ռևոլուցիան փշրեց ազգային-գաղութային ճնշման շղթաները և այդ ճնշումից ազատագրեց լայնատարած պետության բոլոր ճնշված ժողովուրդներին՝ առանց բացառության»[1]։ «Հոկտեմբերյան ռևոլուցիան, կտրտելով հին շղթաները և ասպարեզ քաշելով մի շարք ծեծկված ժողովուրդներ ու ազգություններ՝ նրանց նոր կյանք ու նոր զարգացում տվեց»[2]։

Սովետական մյուս ժողովուրդների հետ միասին, բոլշևիկների փառապանծ պարտիայի գլխավորությամբ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները ձեռնամուխ եղան նոր կյանքի ստեղծմանը՝ սոցիալիզմի կառուցմանը։

Սովետական իշխանությունը արմատական փոփոխություններ մըտցրեց երկրի ինչպես տնտեսական, նույնպես և քաղաքական կյանքում։ Շահագործող դասակարգերը՝ բուրժուազիան ու կալվածատերերը, որոնք մինչև այդ, բացի իշխանությունից ունեին նաև բազմատեսակ արտոնություններ, զրկվեցին ոչ միայն իշխանությունից, այլև այդ արտոնություններից։ Հայտնի է, որ մինչև սովետական կարգերի հաստատումը հողի ամենալավագույն և ամենամեծ մասը գտնվում էր կալվածատերերի, կուլակների և վանքերի ձեռքում։

1920 թվականի դեկտեմբերի 20-ին հրապարակվում է Հայաստանի Ռևկոմի դեկրետը հողերի ազգայնացման մասին։ Այդ դեկրետի կենսագործման շնորհիվ ռեսպուբլիկայում ազգայնացվում է մոտ 1,5 միլիոն հեկտար հող, որի խոշորագույն մասը պետությունը հանձնում է գյուղացիական տնտեսությունների օգտագործմանը։ 1921 թվականի հունվարին ազգայնացվում են ռեսպուբլիկայում գտնվող բոլոր անտառները, հողի ընդերքը, ոռոգման ամբողջ սիստեմը, բոլոր ջրերը։

Սովետական իշխանության այդ և դրան հետևող մյուս միջոցառումներն անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեցին հետագայում մեր գյուղի սոցիալիստական վերակառուցման համար։

Սովետական իշխանությունը ազգայնացնում է նաև բանկերը, արդյունաբերական խոշոր ձեռնարկությունները, երկաթուղիները և այլն։ Կալվածատերերն ու կապիտալիստները զրկվում են աշխատավորական մասսաներին շահագործելու հնարավորությունից։ Այդ մասսաները ազատագրվելով շահագործումից և իշխանությունը վերցնելով իրենց ձեռքը, սկսում են նոր կյանքի կառուցումը։ Այդ նշանակում է, որ քաղաքական բնագավառում ևս տեղի ունեցան արմատական փոփոխություններ՝ ի վնաս շահագործողների, հօգուտ աշխատավորների։ Սովետական կառավարության դեկրետներով լիկվիդացվում են հին վար-

[1] Ի. Ստալին, երկեր, հատ. 10, Երևան, 1949 թ., էջ 273։
[2] Ի. Ստալին, երկեր, հատ. 7, Երևան, 1949 թ., էջ 153։

չական հիմնարկությունները, հին օրենքները, այդ օրենքները պաշտպանող հին դատարանները, դասերը, դասային բոլոր արտոնություններն ու սահմանափակումները։

Խոշոր ձեռնարկումներ են կատարվում կուլտուրական բնագավառում։ Հայաստանի Ռևկոմի 1920 թվականի դեկտեմբերի 6-ի դեկրետով ռեսպուբլիկայի սահմաններում հայերենը ճանաչվում է պետական լեզու։ Եկեղեցին անջատվում է պետությունից, դպրոցը՝ եկեղեցուց։ Հիմնադրվում են բազմաթիվ նոր դպրոցներ։ Հայկական դպրոցներին զուգընթաց, կազմակերպվում են ադրբեջանական, ռուսական դպրոցներ։ Ազգային լեզուներով սկսում է հրատարակվել գրականություն։ Լիկվիդացվում է կոնտրոլուցիոն մամուլը։ Սկիզբ է առնում նոր, սովետական պարբերական մամուլը։

1921 թվականի հունվարին կազմակերպվում է Սովետական Հայաստանի առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Երևանի Պետական համալսարանը, որը ներկայումս կրում է Մեծ Ստալինի հավատարիմ զինակից ընկեր Մոլոտովի անունը։ Պետականացվում են բոլոր կուլտուրակրթական հիմնարկությունները։

Այն նախագրյալներ են ստեղծվում ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի զարգացման համար։

Լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը բուրժուական նացոնալիզմի իդեոլոգիային հակադրեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի իդեոլոգիան, ժողովուրդների ազատության, սուվերեն իրավահավասարության և եղբայրության իդեոլոգիան։ 1922 թվականի մարտ ամսին, Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպումով Սովետական Հայաստանը տնտեսական, քաղաքական ու ռազմական ամուր դաշինք է հաստատում Սովետական Ադրբեջանի և Սովետական Վրաստանի հետ։ Նույն թվականի դեկտեմբերին կազմակերպվում է Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միությունը, որի իրավահավասար անդամներից մեկը դառնում է Անդրկովկասյան ֆեդերացիան։

ՍՍՌՄ-ի ստեղծումը, որի ոգեշնչողներն ու կազմակերպիչները հանդիսացել են Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը, խոշորագույն պատմական իրադարձություն էր սովետական ժողովուրդների կյանքում։ Միասնական սովետական պետությունը ապահովում է մեր երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների համագործակցությունը, նրանց յուրաքանչյուրի ազգային շահերը համաչափ կերպով ներդաշնակելով ընդհանուր պետական շահերի հետ։ Մեր բազմազգ սոցիալիստական պետության կենսունակությունը, նրա հզորությունը մշտական զարգացման և առաջընթացի անսպառ հնարավորություններ են ստեղծում Սովետական երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների համար։ Իր հերթին սովետական ժողովուրդների լենինյան-ստալինյան բարեկամությունը մեր սոցիալիստական պետությանը տվել ու տալիս է հսկայական ուժ։

Սովետական Միության ժողովուրդների հաջողությունները սոցիալիստական հասարակության կառուցման գործում կանխորոշվել և ապահովվել են նրանով, որ բոլշևիկների պարտիան երկարատև տարիների ընթացքում կոփում և ամրապնդում է սովետական ժողովուրդների եղբայրական բարեկամությունը, անողոքաբար մերկացնելով ու ջախջախելով բուրժուա-

կան նացիոնալիզմի, կոսմոպոլիտիզմի յուրաքանչյուր արտահայտություն, քշնամական յուրաքանչյուր իդեոլոգիա, հետևողական ու սիստեմատիկ պայքար տանելով մարդկանց գիտակցության միջից կապիտալիզմի մնացուկների լիկվիդացման համար։

Սովետական Միության ստեղծումը իրականում հանդիսացավ մեր երկրի բազմազգ և բազմամիլիոն ժողովուրդների բարեկամության և ինտերնացիոնալ դաշինքի հաստատման կլասիկ օրինակը։

Ինչպես Սովետական Միության ստեղծման, նույնպես և նրա հետագա ամրապնդման ու համաշխարհային-պատմական հաջողությունների գործում առաջատար դեր է կատարել ռուս մեծ ազգը, որը «Սովետական Միության կազմի մեջ մտնող բոլոր ազգերից առավել ականավոր ազգն է»[1]։

Ռուս ժողովրդի այդ մեծ դերը գեղեցիկ կերպով պատկերված է Սովետական Միության հիմնի հետևյալ խոսքերում.

Անխախտ դաշինքով ազատ ռեսպուբլիկաները
Մեծ Ռուսիան ի մի է զոդել հավիտյան։

Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը բոլշևիկների պարտիայի, Ռուսաստանի բանվոր դասակարգի և սովետական իշխանության առաջ մարտական խնդիր դրեցին՝ բազմակողմանի օգնություն կազմակերպել մեր երկրի բոլոր այն ժողովուրդներին, որոնք դարեր շարունակ ճնշվել և կեղեքվել են ցարական Ռուսաստանի տիրող դասակարգերի ու օտարերկրյա բուրժուազիայի կողմից, զուրկ են եղել ոչ միայն զարգացման, այլև իրենց գոյությունը պաշտպանելու հնարավորությունից։

Այդպիսի ժողովուրդների թվին է պատկանել նաև հայ ժողովուրդը։ Իրականացնելով ժողովուրդների իրավահավասարության և բարեկամության սկզբունքը, սոցիալիստական ռևոլուցիայի հանճարեղ առաջնորդներ Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը բոլշևիկների պարտիայի և սովետական իշխանության առաջ խնդիր դրեցին՝ կարճ ժամանակամիջոցում հասնել մեր երկրի ժողովուրդների փաստական հավասարությանը՝ տնտեսական, քաղաքական և կուլտուրական բնագավառներում։

Սովետական Միության կազմակերպման նախօրյակին, 1921 թվականին բոլշևիկների պարտիայի 10-րդ համագումարում ազգային հարցի մասին տված զեկուցման մեջ ընկեր Ստալինը նշել է, որ Ռուսաստանում ազգային հարցի լուծումը պահանջում է լիկվիդացնել մի շարք ազգերի տնտեսական, քաղաքական և կուլտուրական այն փաստական հետամնացությունը, որը նրանք ժառանգել են հին կարգերից և այդ ազգերին հնարավորություն տալ հասնելու կենտրոնական Ռուսաստանին՝ ինչպես պետական, նույնպես և տնտեսական ու կուլտուրական տեսակետից։ Դրա համար անհրաժեշտ էր, որպեսզի յուրաքանչյուր սովետական ժողովուրդ, յուրաքանչյուր սովետական ռեսպուբլիկա ունենար զարգացման նյութական պայմաններ, կուլտուրական միջոցներ, ունենար իր ազգային կադրերը, որոնք հանդիսանում են փաստական հավասարություն ստեղծելու կարևոր նախադրյալները։

Հետևողականորեն կենսագործելով լենինյան-ստալինյան ազգային

[1] Ի. Ստալին, Սովետական Միության հայրենական Մեծ պատերազմի մասին, Երևան, Հայպետհրատ, 1950 թ., էջ 233։

քաղաքականությունը, Սովետական Հայաստանի բոլշևիկները, Անդրկովկասյան Երկրային Կոմիտեի, Ս. Օրջոնիկիձեի, Ս. Մ. Կիրովի և Ալ. Մյասնիկյանի ղեկավարությամբ 1921—1925 թվականներին խոշոր հաջողություններ ձեռք բերին ժողովրդական տնտեսության վերականգնման, Ռեսպուբլիկայի տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման ուղղությամբ։

Բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ Հայաստանի բանվոր դասակարգը, չքավոր ու միջակ գյուղացիությունը և աշխատավոր ինտելիգենցիան վերականգնման շրջանի վերջում հասել էին խոշոր հաջողությունների։

Նշանակալից հաջողություններ ձեռք բերվեցին ցանքատարածությունների ընդարձակման ասպարեզում։ Բավական է միայն ասել, որ ցանքատարածությունը 1919 թվականի համեմատությամբ 1925 թվականին աճել էր 3,5 անգամ։ Զգալի աշխատանք կատարվեց ոռոգման և բերքատվության բարձրացման ուղղությամբ։ Հաջողությամբ առաջ էր գնում նաև անասնապահության վերականգնումը, որը մոտենում էր նախապատերազմյան մակարդակին։

Վերականգնման շրջանի վերջում Սովետական Հայաստանում զգալի տեղաշարժեր կատարվեցին գյուղատնտեսական կոոպերացիայի գծով։ 1924 թվականին կազմակերպվում է Հայաստանի Գյուղկոոպկենտրոնը, որի առաջ խնդիր է դրվում ապահովել պարտիայի և կառավարության որոշումների իրականացումը գյուղատնտեսության կոոպերացման ուղղությամբ՝ չքավոր ու միջակ գյուղացիությանը միավորելով կոոպերացիայի սկզբնական ձևերի մեջ — կաթնատնտեսական արտել, գյուղատնտեսական վարկային, այգեգործական, մեղվաբուծական, ծխախոտագործական, բամբակագործական, շերամապահական ընկերություններ, և այլն։ 1924 թվականի սեպտեմբերին Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիայի մեջ էր ընդգրկված աշխատավորական գյուղացիական տնտեսությունների 6,11 տոկոսը[1]։ Դրանք գյուղատնտեսական կոոպերացիայի պարզ ձևերն էին, որոնք ուղի էին հարթում կոոպերացիայի ավելի բարձր ձևերին անցնելու համար։ Վերականգնման շրջանում Սովետական Հայաստանում զգալի աշխատանքներ են կատարվել նաև սովխոզների շինարարության գծով։

Արդյունաբերության վերականգնման ուղղությամբ ևս աշխատանքները լայն ճակատով առաջ էին գնում։ Հնի վերականգնման զուգընթաց սկիզբ դրվեց մի շարք նոր ճյուղերի շինարարությանը, որոնք նախասովետական շրջանում չկային (պեմզայի, կարբիդի, տեքստիլ արդյունաբերության և այլն)։

Էլեկտրաէներգիայի արտադրությունը վերականգնման շրջանի վերջում՝ 1925—1926 տնտեսական տարում նախապատերազմյան շրջանի համեմատ ավելացել է 3,5 անգամ։ Հայաստանի արդյունաբերության կարևոր ճյուղերից մեկի՝ գինու արտադրությունը նույն տնտեսական տարում արդեն անցել էր նախապատերազմյան մակարդակից։ Կոնյակի և սպիրտի արտադրությունը մոտենում էր նախապատերազմյան մակարդակին։

Վերականգնման շրջանի վերջում ծավալուն աշխատանքներ են սկսվում Սովետական Հայաստանի արդյունաբերության գլխավոր ճյուղի՝ Ալավեր-

[1] «Խորհրդային Հայաստան 1920—1925 թթ.», ժողովածու, Երևան, 1926 թ., էջ 270։

դու և Ղափանի պղնձարդյունաբերության վերականգնման ուղղությամբ։ Հաջող կերպով առաջ էր գնում նաև երկաթուղային տրանսպորտի վերականգնումը։ Զգալի հաջողություններ էին ձեռք բերված սովետական պետական և կոոպերատիվ առևտրի, ապրանքաշրջանառության ծավալման, գյուղի և քաղաքի կապի ամրապնդման գործում։

Սովետական Հայաստանի հաջողությունները երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ ընթանում էին Սովետական Միության և Անդրկովկասյան ֆեդերացիայի ընդհանուր հաջողություններին համընթաց։

Սովետական Միության ժողովրդական տնտեսության մեջ հաստատ կերպով ամրապնդվում էին սոցիալիստական սիստեմի իշխող դիրքերը, ծավալվում էր երկրի ինդուստրացումը։ Ինչպես ասված է Համ(ր)Պ Պատմության համառոտ դասընթացում «արագորեն առաջ էր գնում արդյունաբերության սոցիալիստական սեկտորի աճումն ի հաշիվ մասնավոր սեկտորի, 1924—1925 թվականի 81 տոկոսից 1926—1927 թվականին հասնելով 86 տոկոսի, այնինչ մասնավոր սեկտորի տեսակարար կշիռը նույն ժամանակամիջոցում 19 տոկոսից իջավ 14 տոկոսի։

Այդ նշանակում է, որ ՍՍՌՄ-ում ինդուստրացումը որոշակի արտահայտված սոցիալիստական բնույթ ունի, որ ՍՍՌՄ-ի արդյունաբերությունը զարգանում է արտադրության սոցիալիստական սիստեմի հաղթանակի ճանապարհով, որ արդյունաբերության ասպարեզում «ով՝ ումն» հարցն արդեն կանխորոշված է հօգուտ սոցիալիզմի»[1]։

Սովետական Միության ընդհանուր հաջողություններին զուգընթաց, սոցիալիստական շինարարությունը Հայկական ՍՍՌ-ում ավելի լայն ծավալ է ստանում երկրի ինդուստրացման տարիներին (1926—1929 թթ.)։ Այդ տարիներին խոշոր ներդրումներ են կատարվել ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ։ Այսպես, եթե սովետական կարգերի հաստատումից մինչև 1924—1925 տնտեսական տարին ներառյալ Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ ներդրվել է 25,77 միլիոն ռուբլի, ապա հետագա երեք տարիների ընթացքում՝ 1925—1926—1927—1928 թթ. ներդրվել է 47,33 միլիոն ռուբլի[2]։

Այդ տարիներին ստեղծվել են արդյունաբերության մի շարք նոր ճյուղեր՝ քիմիական, շինանյութերի, ցեմենտի, փայտամշակման և այլն, ընդարձակվել են էլեկտրաէներգիայի արտադրությունը, պղնձի, տեքստիլ, սննդի արդյունաբերությունը, պոլիգրաֆ արտադրությունը և այլն։

Խոշոր հաջողություններ են ձեռք բերված նաև մեր երկրի գյուղատնտեսության մեջ։ Այդ մասին ընկեր Ստալինը 1929 թվականին գրել է.

«Խոսքը վերաբերում է մեր հողագործության զարգացման մեջ տեղի ունեցած արմատական բեկմանը մանր ու հետամնաց անհատական տնտեսությունից դեպի խոշոր ու առաջավոր կոլեկտիվ հողագործությունը, դեպի հողի միատեղ մշակումը, դեպի մեքենա-տրակտորային կայանները, դեպի արտելները, կոլխոզները, որոնք հենվում են նոր տեխնիկայի վրա,

[1] Համ(ր)Պ Պատմություն, Համառոտ դասընթաց, Երևան, 1950 թ., էջ 385։

[2] Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода., Эривань, 1928 г., стр. 39.

վերջապես դեպի սովիոզ-գիգանտները, որոնք զինված են հարյուրավոր տրակտորներով ու կոմբայններով»[1]։

Այդ հաջողությունները Սովետական Միությունում և նրա բաղկացուցիչ մասը կազմող Սովետական Հայաստանում ձեռք են բերվել բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ, անողոք ու անհաշտ պայքար մղելով սոցիալիզմի կատաղի թշնամիների՝ տրոցկիստների, զինովևականների, բուխարինականների, բուրժուական նացիոնալիստների և մյուս թշնամիների դեմ, որոնք ամեն կերպ փորձում էին վերականգնել շահագործողների տիրապետությունը և արգելակել սովետական ժողովուրդների առաջընթացը դեպի սոցիալիզմ։

Այսպիսով, Հայաստանում սովետական կարգերի հաղթանակով, այդ հաղթանակի շնորհիվ երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում տեղի ունեցած արմատական փոփոխություններով հին, բուրժուական ազգի փլատակների վրա սկսվեց հայ ազգի՝ որպես նոր, սոցիալիստական ազգի ծագումն ու զարգացումը։ Հետագա տարիներին՝ ժողովրդական տնտեսության վերականգնման ու երկրի ինդուստրացման գործում ձեռք բերված հաջողություններով, որոնցով դրվեցին սոցիալիստական էկոնոմիկայի հիմքերը, ավարտվեց հայ ազգի՝ որպես սոցիալիստական ազգի կազմավորումը։

1929 թվականին ընկեր Ստալինը գրեց «Ազգային հարցը և լենինիզմը» աշխատությունը, ուր ի թիվս նոր կազմավորված սոցիալիստական ազգերի՝ ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների, թաթարների, բաշկիրների, ուզբեկների, ղազախների, ադրբեջանցիների, վրացիների, թվում է նաև հայերին։

«...Բուրժուական ազգերի լիկվիդացումը նշանակում է ոչ թե ընդհանրապես ազգերի լիկվիդացում,—ասում է ընկեր Ստալինը,—այլ միմիայն բուրժուական ազգերի լիկվիդացում։ Հին, բուրժուական ազգերի փլատակների վրա ծագում և զարգանում են նոր, սոցիալիստական ազգեր, որոնք անհամեմատ ավելի համախմբված են, քան ամեն մի բուրժուական ազգ, որովհետև նրանք վերջ են բուրժուական ազգերին մաշող անհաշտելի դասակարգային հակասություններից և անհամեմատ ավելի համաժողովրդական են, քան որևէ բուրժուական ազգ»[2]։

Եթե հին, բուրժուական հայ ազգը, ինչպես և մյուս բոլոր հին ազգերը ծագել են բուրժուազիայի և նրա նացիոնալիստական պարտիաների ղեկավարությամբ, որոնք այդ ազգերին հրահրել են միմյանց դեմ, նրանց մեջ սերմանել ու արմատավորել են թշնամանք և ատելություն, նրանց պատերազմի մեջ են քաշել կամ թալանել, ոչնչացրել են մյուս ազգերին, ապա նոր, սոցիալիստական ազգերը, այդ թվում նաև հայ ազգը ծագել ու ձևավորվել է պրոլետարիատի և նրա ավանգարդի՝ բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ, որի ազգային քաղաքականության հիմքում ընկած է ազգերի և ռասաների սուվերեն իրավահավասարության, նրանց ապատության ու եղբայրության անխախտ դաշինքի, փոխադարձ վստահության և փոխադարձ օգնության գաղափարը, ինտերնացիոնալիզմի գաղափարը,

[1] Ի. Ստալին. Երկեր, հատ. 12, Երևան, 1949 թ., էջ 140—141։
[2] Ի. Ստալին. Երկեր, հատ. 11, էջ 386։
[3] Նույն տեղում, էջ 387։

ընդդեմ բուրժուական նացիոնալիզմի։ «Բանվոր դասակարգը և նրա ինտերնացիոնալիստական պարտիան այն ուժն են,—ասում է ընկեր Ստալինը,—որ ամրակցում է այդ նոր ազգերին և ղեկավարում է նրանց»[1]։

* * *

Սոցիալիստական շինարարության ծավալման հետագա տարիները միաժամանակ հանդիսանում են մեր երկրի նոր, սոցիալիստական ազգերի, նրանց թվում նաև հայ ազգի զարգացման ու ծաղկման տարիներ։ Ստալինյան հնգամյակների կենսագործումով անշեղ կերպով բարձրանում էր Սովետական Միության արդյունաբերության տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ՝ սոցիալիստական գյուղատնտեսության արագ զարգացման և անշեղ վերելքի պայմաններում։ Երկրի բոլոր մասերում չտեսնված արագությամբ աճում էին նոր արդյունաբերական կենտրոններ՝ իրենց գործարաններով, ֆաբրիկաներով, էլեկտրակայաններով։

Սովետական Միության ընդհանուր վերելքին զուգընթաց առանձնապես արագ տեմպերով զարգացել ու առաջ են ընթացել ազգային սովետական ռեսպուբլիկաներն ու ծայրամասերը, որոնք մինչև ռևոլուցիան հանդիսանալով ցարիզմի գաղութները, կենտրոնական Ռուսաստանի համեմատությամբ գտնվում էին զարգացման ավելի ցածր մակարդակի վրա։ Այդ զարգացման մասին կոնկրետ պատկերացում են տալիս հետևյալ թվերը։ 1913 թվականի համեմատությամբ, արդյունաբերության ընդհանուր արտադրանքը Սովետական Ռեսպուբլիկաներում 1936 թվականին ավելացել է[2].

ՌՍՖՍՌ-ում	7,8	անգամ
Ուկրաինական ՍՍՌ-ում	6,9	»
Բելոռուսական ՍՍՌ-ում	15,9	»
Ադրբեջանական ՍՍՌ-ում	5,4	»
Վրացական ՍՍՌ-ում	18,6	»
Հայկական ՍՍՌ-ում	12.0	»
Թուրքմենական ՍՍՌ-ում	7,1	»
Ուզբեկական ՍՍՌ-ում	4,4	»
Տաջիկական ՍՍՌ-ում	116 0	»
Ղազախական ՍՍՌ-ում	11,8	»
Կիրգիզական ՍՍՌ-ում	95,0	»

Բոլոր ամրողջությամբ վերցրած Սովետական Միությունում այդ ժամանակամիջոցում արդյունաբերության արտադրանքը բարձրացել է ավելի քան յոթ անգամ։ Մեր երկիրը վեր է ածվել հզոր ինդուստրիալ երկրի։ Ինչպես նշում է ընկեր Ստալինը, 1924 թվականից մինչև 1936 թվականն ընկած ժամանակամիջոցում «... Մեր արդյունաբերությունն աճեց-գարձավ մի վիթխարի ուժ։ Այժմ արդեն չի կարելի այն թույլ և տեխնիկապես վատ զինված անվանել։ Ընդհակառակը, այն հիմնված է այժմ նոր, ժամանակա-

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 385։

[2] «Խորհրդային իշխանության 20 տարին»—վիճակագրական ժողովածու, Երևան, Պետհրատ, 1938 թ., էջ 99։

[3] Տես Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, Երևան, 1940 թ., էջ 621։

կից հարուստ տեխնիկայի վրա՝ ուժեղ կերպով զարգացած ծանր ինդուստրիայով և էլ ավելի զարգացած մեքենաշինությամբ։ Իսկ ամենից գլխավորն այն է, որ կապիտալիզմն իսպառ վտարված է մեր արդյունաբերության սֆերայից, իսկ արտադրության սոցիալիստական ձևն այժմ անբաժանելիորեն տիրապետող սիստեմ է հանդիսանում մեր արդյունաբերության ընագավառում»։

Ամբողջ Սովետական Միության մեջ և ազգային ռեսպուբլիկաներում սոցիալիստական արդյունաբերության այդպիսի վերելքի շնորհիվ լիկվիդացվեց անդունդը երկրի բարձր զարգացած կենտրոնական շրջանների և ծայրամասերի միջև։

Ինչպես բոլոր ազգային ռեսպուբլիկաները, նույնպես և Սովետական Հայաստանը դարձավ զարգացած սոցիալիստական արդյունաբերության և առաջավոր գյուղատնտեսության երկիր։

Դեռևս 1921 թ. ապրիլին Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստներին գրած ծրագրային նամակում Վ. Ի. Լենինը պահանջում էր, որ «Պետք է իսկույն աշխատել բարվոքել գյուղացիների դրությունը և էլեկտրիֆիկացիայի ուռուցման խոշոր աշխատանքներ սկսել»[1]։ Հետևողականորեն կենսագործելով մեծ առաջնորդի այդ ցուցումները, Հայաստանի բոլշևիկները Անդրկովկասյան Երկրային Կոմիտեի ղեկավարությամբ մեծ հաջողություններ էին հասել սոցիալիստական արդյունաբերության զարգացման հիմնական բազայի՝ էլեկտրաէներգիայի արտադրության գծով։ 1930 թվականին սկսվեց Հայաստանի խոշոր էլեկտրակայաններից մեկի՝ Դանաքերտի հիդրոէլեկտրայանի կառուցումը, որը շուտով գործարկվեց։ Նրա էներգետիկ բազայի վրա կառուցվեց Երևանի Կիրովի անվան խոշորագույն կոմբինատը, որը միութենական նշանակություն ունի։ 1932 թվականի նոյեմբերին շահագործման հանձնվեց ռեսպուբլիկայի երկրորդ խոշոր՝ Զորագեսի հիդրոէլեկտրակայանը՝ 22 հազար կիլովատ կարողությամբ, որի էներգետիկ բազայի վրա կառուցվեց Կիրովականի կոմբինատը և ընդարձակվեց Ալավերդու պղնձաձուլական գործարանը։

Այն չափով ծավալվեց արդյունաբերական շինարարությունը, ստեղծվեցին արդյունաբերության նորանոր ճյուղեր։ Երևանում կառուցվում և գործարկվում է մեքենաշինական նոր գործարան, որը հետագա տարիներին ավելի ընդարձակվում է։ 1932 թվականին ավարտում է Երևանի պեմզաբետոնի բլոկների խոշոր գործարանի կառուցումը։ Մեծ զարգացում է ապրում Հայաստանի թեթև արդյունաբերությունը։ Ընդարձակվում են Լենինականի տեքստիլ կոմբինատը, տրիկոտաժի գործարանը, Երևանի մետաքսի, կաշվի գործարանները։ Կառուցվում են Երևանի կարի առաջին գործարանը, ծխախոտի գործարանը և մի շարք ուրիշ գործարաններ։ Խոշոր շինարարություն է կատարվում սննդարդյունաբերության գծով։

Նախապատերազմյան հնգամյակների 13 տարիներին՝ 1928—1940 թվականներին Սովետական Հայաստանի արդյունաբերության արտադրանքն աճեց 15 անգամ, իսկ 1913 թվականի համեմատությամբ՝ 21,5 անգամ։ Այդ-

[1] Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 620—621։

[2] Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, երկու հատորում, հատ. 2-րդ, Երևան, 1939 թ., էջ 885։

պիսի արագ զարգացումը ասպահովեց արդյունաբերության տեսակարար կշռի բարձրացումը արդյունաբերության և գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ՝ 1928 թվականի 28,1 տոկոսից 1940 թվականին հասնելով 80,7 տոկոսի[1]։

Երկրի ինդուստրացման քաղաքականության անշեղ կենսագործման հիման վրա, իրականացվեց ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումը և նյութական անհրաժեշտ նախադրյալներ ստեղծվեցին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար։ Ինչպես նշում է ընկեր Ստալինը, 1936 թվականին Սովետական Միությունում «Գյուղատնտեսության բնագավառում մանր անհատական գյուղացիական տնտեսությունների օվկիանոսի փոխարեն՝ նրանց թույլ տեխնիկայով և կուլակի գերուժությամբ՝ այժմ մենք ունենք աշխարհիս ամենախոշոր մեքենայացված, նոր տեխնիկայով զինված մի արտադրություն՝ կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների համայնապարփակ սիստեմի ձևով»[2]։

1937 թվականին կոլեկտիվ տնտեսությունների մեջ էին ընդգրկված Հայաստանի աշխատավորական գյուղացիական տնտեսությունների 88,7 տոկոսը։ Սոցիալիստական գյուղատնտեսությանը սպասարկելու համար այդ ժամանակ ռեսպուբլիկայում կազմակերպված էին 24 մեքենատրակտորային կայաններ 1100 տրակտորներով, որոնց կարողությունը հավասար էր 17,2 հազար ձիու ուժի։ Բացի դրանից, մեքենա-տրակտորային կայաններն ունեին մեծ քանակությամբ գյուղատնտեսական այլ մեքենաներ՝ կոմբայններ, կալսիչներ, շարքացաններ և այլն, որոնք նույնպես աշխատում էին սոցիալիստական գյուղատնտեսության դաշտերում։

Գյուղում կատարված այդ ռևոլուցիոն հեղաշրջման շնորհիվ, հեղաշրջում, «որն իր հետևանքներով 1917 թվականի հոկտեմբերի ռևոլուցիոն հեղաշրջմանը հավասար նշանակություն ուներ»[3], Սովետական Միության բոլոր ազգերը և ժողովուրդները, նրանց հետ նաև հայ ազգը բարձրացան մինչև սոցիալիզմի մակարդակը։

Սովետական Միությունում ձեռք բերված համաշխարհային պատմական հաղթանակները օրենսդրականորեն ամրապնդվեցին 1936 թվականին Սովետների Համամիութենական 8-րդ արտակարգ համագումարում ընդունված Ստալինյան Կոնստիտուցիայով։ «Այսպիսով,— ասում է ընկեր Ստալինը նույն համագումարում Կոնստիտուցիայի նախագծի մասին տված զեկուցման մեջ,— սոցիալիստական սիստեմի լիակատար հաղթությունը ժողովրդական տնտեսության բոլոր սֆերաներում այժմ փաստ է։

Իսկ ի՞նչ է նշանակում այս։

Այս նշանակում է, որ մարդու շահագործումը մարդու կողմից ոչնչացված է, վերացված է, իսկ արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը հաստատված է որպես մեր սովետական հասարակության անսասան հիմքը»[4]։

[1] Соц. стр. Армянской ССР. (1920—1940 гг.). Ереван, 1940 г., стр. 19.

[2] Ի. Վ. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 621։

[3] «Խորհրդային իշխանության 20 տարին», ժողովածու, Երևան, Պետհրատ, 1938 թ., էջ 101։

[4] Համկ(բ)Պ Պատմություն, Համառոտ դասընթաց, Երևան, 1950 թ., էջ 110։

[5] Ի. Վ. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 621։

Սովետական Միությունում սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ զարգացման նոր աստիճանի հասան մեր երկրի ազգերն ու ժողովուրդները, նրանց հետ նաև հայ ազգը։

«Յուրաքանչյուր օրը մեր ժողովրդին բարձրացնում է ավելի ու ավելի վեր,—ասել է Ա. Ա. Ժդանովը։—Մենք այսօր այն չենք, ինչ որ երեկ էինք և վաղը այն չենք լինի, ինչ որ այսօր ենք։ Մենք արդեն այն ռուսները չենք, ինչ որ մինչև 1917 թվականն էինք, և Ռուսիան էլ արդեն այն չէ, և մեր բնավորությունն էլ այն չէ։ Մենք փոխվել և աճել ենք այն մեծագույն վերափոխությունների հետ միասին, որոնք արմատապես փոխեցին մեր երկրի դեմքը»[1]։

Ա. Ա. Ժդանովի այս խոսքերը հավասարապես վերաբերում են սովետական բոլոր ժողովուրդներին ու բոլոր ռեսպուբլիկաներին, նրանց թվում նաև հայ ժողովրդին ու Սովետական Հայաստանին։

Մեծ Ստալինի գլխավորությամբ բոլշևիկների պարտիան և սովետական ժողովուրդը մինչև վերջ մերկացրին ու ջախջախեցին բուրժուա-նացիոնալիստական և մյուս կոնտրռևոլուցիոն հոսանքները։

Համկ(բ)Պ Կենտկոմի, անձամբ ընկեր Ստալինի հայրական հոգատարության և օգնության շնորհիվ, Հայաստանի բոլշևիկները մերկացրին ու անողոքաբար ջախջախեցին պարտիական և սովետական ապարատներում խցկված բուրժուա-նացիոնալիստական և տրոցկիստական-բուխարինական թափթփուկներին, որոնք ամեն կերպ ձգտում էին Սովետական Հայաստանը անջատել Սովետական Միությունից, ձախողել սոցիալիզմի կառուցումը և այն կրկին վեր ածել դատարկրյա իմպերիալիստների գաղութի։ Ստոր թշնամիների փորձերը ձախողվեցին։ Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և ինտելիգենցիան բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում, այդ ժողովուրդների հետ միասին նոր խանդավառությամբ ձեռնամուխ եղան սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմի անցման պատմական գործին։

Սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ ինչպես Սովետական Միության բոլոր ռեսպուբլիկաներում, այնպես էլ Սովետական Հայաստանում ծագեցին ու ձևավորվեցին բոլորովին նոր հասարակական դասակարգեր՝ սովետական բանվոր դասակարգը, որը ազատ է կապիտալիստական շահագործումից, սովետական կոլտնտեսային գյուղացիությունը, որը վերջնականապես ազատագրված է բուրժուական-կալվածատիրական ճնշումից ու շահագործումից, սովետական ինտելիգենցիան, որը դուրս է եկել բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության ծոցից։ «Չկա այլևս կուլակների դասակարգը գյուղատնտեսության բնագավառում,—ասում է ընկեր Ստալինը։—Չկան այլևս վաճառականներն ու սպեկուլանտները ապրանքաշրջանառության բնագավառում։ Այսպիսով, բոլոր շահագործող դասակարգերը վերացվեցին։

[1] Ա. Ա. Ժդանով, «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին, Երևան, 1946 թ., էջ 34։

Մնաց բանվոր դասակարգը։
Մնաց գյուղացիների դասակարգը։
Մնաց ինտելիգենցիան»[1]։

Այնուհետև ընկեր Ստալինը նշում է, որ «ՍՍՌՄ-ի բանվոր դասակարգը—այդ մի բոլորովին նոր, շահագործումից ազատագրված բանվոր դասակարգ է, որի նմանը մարդկության պատմությունը դեռ չի իմացել», որ «Սովետական գյուղացիությունը—այդ միանգամայն նոր գյուղացիություն է, որի նմանը դեռ չի իմացել մարդկության պատմությունը», որ սովետական ինտելիգենցիան «այդ բոլորովին նոր, աշխատավոր ինտելիգենցիա է, որի նմանը չեք գտնի երկրագնդի ոչ մի երկրում»[2]։

Սովետական բանվոր դասակարգը ծագեց ու ձևավորվեց ոչ միայն երկրի կենտրոնական արդյունաբերական շրջաններում, այլև նրա ծայրամասերում, ազգային ռեսպուբլիկաներում, ցարիզմի այդ նախկին գաղութներում, որոնք ներկայումս իրենց տնտեսական զարգացմամբ հասել են կենտրոնական շրջաններին։ Դրանց թվում է Սովետական Հայաստանը։ Ինչպես Սովետական Միության բոլոր ժողովուրդների կյանքում, նույնպես և հայ ժողովրդի կյանքում, ներկայումս բանվոր դասակարգը հանդիսանում է առաջատար ուժ։

Այսպիսով, եթե հին, բուրժուական ազգերը, նրանց թվում նաև հայ ազգը ծագել ու ձևավորվել են արտադրության կապիտալիստական եղանակի հիման վրա, որը պայմանավորված է երկու հակամարտական դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի առկայությամբ, և որոնց միջև տեղի ունեցող անհաշտ պայքարի հետևանքով կապիտալիզմի ժամանակ ազգը միասնական լինել չի կարող, ապա նոր, սոցիալիստական ազգերը, նրանց թվում նաև հայ ազգը, ծագել, կազմավորվել ու զարգանում են արտադրության սոցիալիստական եղանակի պայմաններում, երբ լիկվիդացված են շահագործող դասակարգերը, վերացված է մարդու կողմից մարդու շահագործումը։ Նոր, սոցիալիստական ազգերի զարգացումը պայմանավորված է սովետական հասարակության բարեկամական դասակարգերի գոյությամբ, բանվոր դասակարգի և գյուղացիության, նրանց ծոցից դուրս եկած ինտելիգենցիայի գոյությամբ, որոնք միասնական և հզոր ուժ են կազմում իրենց նպատակներով, կամքով ու գործողություններով։

Նոր, սոցիալիստական ազգերի հոգևոր ու սոցիալ-քաղաքական կերպարանքի մասին ընկեր Ստալինը գրում է. «Բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինք ազգի ներսում՝ կապիտալիզմի մնացորդները լիկվիդացնելու համար հանուն սոցիալիզմի հաղթական շինարարության, ազգային ճնշման մնացորդների ոչնչացում հանուն ազգերի և ազգային փոքրամասնությունների իրավահավասարության ու ազատ զարգացման, նացիոնալիզմի մնացորդների ոչնչացում հանուն ժողովուրդների միջև բարեկամություն ստեղծելու և ինտերնացիոնալիզմ հաստատելու, միասնական ճակատ բոլոր ճնշված ու ոչ-լիիրավ ազգերի հետ զավթումների ու զավթողական պատերազմների դեմ մղվող պայքարում, իմպերիա-

[1] Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 622։
[2] Նույն տեղում, էջ 623 և 624։

լիզմի դեմ մղվող պայքարում,—այս է այդ ազգերի հոգևոր ու սոցիալ-քաղաքական կերպարանքը»[1]։

Էկոնոմիկայում և սոցիալ-դասակարգային կառուցվածքում տեղի ունեցած մեծագույն փոփոխություններին զուգընթաց, սովետական բոլոր ժողովուրդների կյանքում տեղի ունեցավ իսկական կուլտուրական ռևոլուցիա, որը խորտակեց ու ոչնչացրեց ժողովրդական մասսաների կաշկանդած խավարն ու կուլտուրական հետամնացությունը, նրանց զարգացրեց, հասցրեց չտեսնված բարձրության։ Բոլոր ազգային ռեսպուբլիկաներում հսկայական ծավալ ընդունեց ժողովրդական լուսավորության գործը։ Կրթությունը և գիտությունը դարձան ժողովրդական լայն մասսաների սեփականությունը։ Բոլոր դպրոցներում սովորողների թիվը՝ 1914—1915 ուսումնական տարում ցարական Ռուսաստանում սովորողների թվի համեմատությամբ 1936—1937 ուսումնական տարում ամբողջ Սովետական Միությունում ավելացել էր 3,5 անգամ։ Հայկական ՍՍՌ-ում այդ նույն ժամանակամիջոցում բոլոր դպրոցներում սովորողների թիվը ավելացել էր 7,1 անգամ[2], իսկ 1940 թվականին այն արդեն ավելացել էր 9,4 անգամ[3] (չհաշված բարձրագույն դպրոցներում սովորողներին)։ Իսպառ լիկվիդացվել էր անգրագիտությունը։ Հայաստանը, որը մինչև սովետական կարգերի հաստատումը չուներ ոչ մի բարձրագույն դպրոց, 1937—1938 ուսումնական տարում նրանց թիվը հասնում էր 8-ի՝ 4958 սովորողներով[4]։

«Մեծ Ստալինյան Կոնստիտուցիան,—գրում է «Պրավդան» իր առաջնորդողում,—մեր երկրի բոլոր ժողովուրդների համար ապահովում է բազմակողմանի զարգացում—և՛ երիտասարդ ժողովուրդների, որոնք միայն վերջերս են հանդես եկել պատմության ասպարեզ, և՛ հնագարյան կուլտուրա ունեցող ժողովուրդների, որոնք անցել են հազարամյա պատմական ուղի։ Վերջիններիս թվին է պատկանում հայ ժողովուրդը՝ իր բազմադարյան կուլտուրայով, որն իր պատմական կյանքն է սկսել մեր թվականությունից առաջ»[5]։

Ստալինյան Կոնստիտուցիայի հիման վրա Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան հավասարության հիմունքներով մտավ աշխարհում ամենախոշոր և ամենահզոր պետության՝ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության մեջ։ Այդ պատմական խոշորագույն իրադարձությունը հանդիսացավ մեր ժողովրդի կյանքում։ Սովետական Ռեսպուբլիկաների իրավահավասար և եղբայրական ընտանիքում Սովետական Հայաստանը թևակոխեց զարգացման նոր, էլ ավելի բուռն վերելքի շրջանը։

Մեծ առաջնորդ ընկեր Ստալինի, Սովետական Միության կառավարության հոգատարության շնորհիվ 1935 թվականին կազմակերպվում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալը (Արմֆանը), որը աճելով և ամրապնդվելով, 1943 թվականին վեր է ածվում ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի։ Առաջնորդվելով լենինյան-ստալինյան ուսմունքով,

---

1 Ի. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 385—386։

2 «Խորհրդային իշխանության 20 տարին», ժողովածու, Երևան, 1938 թ., էջ 101։

3 Соц. стр. Армянской ССР, стр 109

4 Նույն տեղում, էջ 113։

5 «Պրավդա», 1939 թ., հոկտեմբերի 20։

և սերտորեն շաղկապվելով սոցիալիստական շինարարության պրակտիկայի հետ, որպես ռեսպուբլիկայի գիտական մտքի կենտրոն, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան անցած տարիների ընթացքում խոշոր աշխատանք է կատարել սովետական գիտության զարգացման գործում։

Սովետական իշխանությունը իրականացրեց հայ ժողովրդի դարավոր իղձը։ Նա հայ ժողովրդի համար ստեղծեց բոլոր հնարավորությունները հոգևոր կուլտուրայի բարդ ձևերի ու տեսակների ստեղծման ընդգավառում։ Սովետական գիտության անշեղ վերելքին զուգընթաց՝ ռեսպուբլիկայում աճել ու զարգացել է ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան, մեր գրականությունը, երաժշտությունը, թատրոնը, կերպարվեստը և արվեստի մյուս տեսակները։

Սովետական Հայաստանում «Բարձր զարգացում են ստացել գրականությունը և արվեստը,—ասում է Հ(բ)Ղ Կենտկոմի քարտուղար ընկ. Գր. Հարությունյանը։—Հմտորեն օգտագործվում է անցյալի կուլտուրայի հարուստ ժառանգությունը։

Գրականությունը և արվեստը իրենց բարձր-գաղափարական, գեղարվեստական երկերով ավելի ու ավելի մեծ դեր են խաղում աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործում։

Հայերի հազարամյա կուլտուրան դեռ չէր տեսել այնպիսի ծաղկում, ինչպիսի ծաղկման նա հասել է Սովետական իշխանության գոյության 30 տարվա ընթացքում, ստալինյան իմաստուն ազգային քաղաքականության շնորհիվ»[1]։

Սովետական մեծ երկրում յուրաքանչյուր ազգություն, այդ թվում նաև հայ ազգը, իր կուլտուրական ստեղծագործություններով առաջնորդվում է մեր դարաշրջանի՝ սոցիալիզմի դարաշրջանի գլխավոր իդեայով՝ հանուն կոմունիզմի, ազատ աշխատանքի ու ազնիվ պայքարի իդեայով։ «Մենք պրոլետարական կուլտուրա ենք կառուցում,—ասում է ընկեր Ստալինը։ Այս միանգամայն ճիշտ է։ Բայց ճիշտ է նաև այն, որ իր բովանդակությամբ սոցիալիստական՝ պրոլետարական կուլտուրան, նայած լեզվի, կենցաղի և այլն տարբերության, արտահայտման զանազան ձևեր ու եղանակներ է ընդունում սոցիալիստական շինարարության ասպարեզ ներքաշված զանազան ժողովուրդների մոտ։ Իր բովանդակությամբ պրոլետարական, ձևով ազգային,—այսպես է այն համամարդկային կուլտուրան, դեպի որն ընթանում է սոցիալիզմը»[2]։

Տնտեսական, քաղաքական համագործակցության զուգընթաց, գնալով էլ ավելի են ամրապնդվում Սովետական Միության սոցիալիստական ազգերի կուլտուրական կապերը։ Ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի աճումն ու զարգացումը տեղի ունի կուլտուրական ամուր դաշինքի, սերտ համագործակցության և փոխադարձ ներգործության պայմաններում։ Սովետական ազգային ռեսպուբլիկաների, տարբեր ազգերի ու ժողովուրդների յուրաքանչյուր նշանավոր հաջողություն, յուրաքանչյուր տոնակատարություն նշվում է Սովետական Միության բոլոր

[1] Հայաստանի Կ(բ)Ղ Կենտկոմի քարտուղար ընկ. Գր. Հարությունյանի ճառից, արտասանված Երևանում Ի. Վ. Ստալինի մոնումենտ-քանդակի բացմանը նվիրված միտինգում։ «Սովետական Հայաստան», 1950 թ., նոյեմբերի 30։

[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 7, էջ 152։

ժողովուրդների կողմից, որպես իրենց սեփական հաջողությունը, որպես իրենց հարազատ տոնը։

Ինչպես հայտնի է, 1939 թվականին նշվեց հայկական ժողովրդական էպոսի՝ «Սասունցի Դավիթ»-ի 1000 ամյակը։ Հայ ժողովրդի հետ միասին այդ տոնակատարությանը մասնակցեցին սովետական բոլոր ժողովուրդները։ Այն վերածվեց սովետական ժողովուրդների բարեկամության, եղբայրության և ամուր կուլտուրական կապերի ցուցադրման տոնի։ Այդ կապակցությամբ «Պրավդան» 1939 թվականի սեպտեմբերի 15-ի առաջնորդողում գրել է. «Հայ ժողովուրդը տոնում է իր հերոսական էպոսի, մեծագույն երկի՝ «Սասունցի Դավիթ» հիանալի պոեմի հազարամյակը։ Այդ տոնակատարությանը մասնակցում է ամբողջ սովետական ժողովուրդը։ Պոեմի հերոսական կերպարները մտել են սովետական գրականության և կուլտուրայի ընդհանուր գանձարանը։

...Հայ ժողովրդի տոնը, որը դարձել է ամբողջ սովետական ժողովրդի տոն, վկայում է նոր կուլտուրայի այդ հզոր աճման մասին, սոցիալիզմի ստեղծած նոր աշխարհի ամենահաղթ ուժի մասին»։

Սովետական երկրի սոցիալիստական ազգերը միշտ այդպես են նշում մեր մեծ Հայրենիքի ժողովուրդների կյանքի նշանավոր դեպքերը։ Եվ ամեն անգամ ավելի ու ավելի է ամրապնդվում նրանց եղբայրական դաշինքը։ Այդպես է սովորեցրել Լենինի—Ստալինի պարտիան՝ սովետական ժողովուրդների հաղթանակների կազմակերպիչն ու ոգեշնչողը։

Այսպիսով, եթե հին, բուրժուական ազգերը, նրանց թվում նաև հայ ազգը ստեղծել են երկու տարբեր կուլտուրաներ՝ մեկ կողմից տիրապետող դասակարգերի շահերին համապատասխանող կուլտուրա, իսկ մյուս կողմից դեմոկրատական կուլտուրա, որը պայքարի մեջ է եղել առաջինի հետ, ապա նոր, սոցիալիստական ազգերը, այդ թվում հայ ազգը, ստեղծել են այնպիսի կուլտուրա, որը միասնական է, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական։ Այս նոր կուլտուրան անհաշտ ատելությամբ է լցված դեպի ամեն կարգի շահագործումն ու անհավասարությունը։ Նրա զարգացումը տեղի ունի սոցիալիստական բոլոր ազգերի կուլտուրական ամուր դաշինքի, սերտ համագործակցության և փոխադարձ ներգործության պայմաններում։ Նա ծառայում է կոմունիստական հասարակակարգի կառուցման գործին։

* * *

Սովետական Միությունում, սոցիալիստական ազգերի կազմավորումը և զարգացումը ընթացել է բուրժուական նացիոնալիզմի և թշնամական մյուս հոսանքների դեմ տեղի ունեցած անհաշտ պայքարում։

Ինչպես հայտնի է, Անդրկովկասում, առանձնապես սովետական իշխանության առաջին տարիներին, երբ Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի կողմից դրված էր Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպման հարցը, բուրժուա-նացիոնալիստական տարրերը կատաղաբար դիմադրում էին Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպմանը։ Այն ժամանակ ընկեր Ստալինը Անդրկովկասի, Հայաստանի բոլշևիկների առաջ մարտական խնդիր դրեց՝ «վերացնել նացիոնալիստական ճնացուկները, շիկացած երկաթով ոչնչացնել դրանք և ստեղծել փոխադարձ վստահության առողջ մթնոլորտ Անդրկովկասի ազգությունների աշխատավորության մեջ՝ հեշտացնելու և արագաց-

նելու համար Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների տնտեսական ֆանքերի միավորման գործը...»[1]։

Առաջնորդվելով ընկեր Ստալինի ցուցումներով, Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի բոլշևիկները Անդրկովկասյան Երկրային Կոմիտեի, նրա քարտուղար ընկ. Ս. Օրջոնիկիձեի ղեկավարությամբ Անդրֆեդերացիայի ստեղծման և ամրապնդման համար ծավալուն պայքար են կազմակերպում տեղական նացիոնալիստների, մեծապետական շովինիստների և ամեն տեսակի թշնամական հոսանքների դեմ։ Այդ պայքարում ջախջախելով նրանց, Անդրկովկասի բոլշևիկները էլ ավելի են ամրապնդում Անդրկովկասյան ժողովուրդների տնտեսական, քաղաքական և ռազմական դաշինքը, որը վճռական նշանակություն ունեցավ նրանց հետագա վերելքի գործում՝ սոցիալիստական շինարարության ուղղությամբ։

Ընկեր Ստալինը մինչև վերջ մերկացրեց ու ջախջախեց բուրժուական նացիոնալիստների «թեորիան», ըստ որի Սովետական Միությունում սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանը հանդիսանում է ազգային կուլտուրաների լիկվիդացման շրջան։ «Իրականում,— գրում է ընկեր Ստալինը,— պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանը ՍՍՌՄ-ում ազգային կուլտուրաների,— բովանդակությամբ սոցիալիստական և ձևով ազգային կուլտուրաների ծաղկման ժամանակաշրջան է, որովհետև իրենք ազգերն էլ սովետական կարգերի ժամանակ ոչ թե սովորական «ժամանակակից» ազգեր են, այլ սոցիալիստական ազգեր այնպես, ինչպես նրանց ազգային կուլտուրաները ըստ բովանդակության ոչ թե սովորական, բուրժուական կուլտուրաներ են, այլ սոցիալիստական կուլտուրաներ»[2]։

Մեր Սովետական Հայրենիքի պատմական հաղթանակների և ժողովուրդների լենինյան-ստալինյան բարեկամության հաստատման և ամրապնդման գործում առաջատար դերը պատկանում է ռուս մեծ ժողովրդին՝ Սովետական Միության իրավահավասար ազգերի ու ժողովուրդների եղբայրական ընտանիքում ամենից ավելի ականավոր ազգին։ Ինչպես հայ ժողովրդի, նույնպես և բոլոր սովետական ժողովուրդների ձեռք բերած հաջողությունների գործում խոշորագույն նշանակություն ունի ռուս մեծ ժողովրդի տնտեսական, քաղաքական, ռազմական, կուլտուրական անշահախնդիր օգնությունը։

Առանց այդ օգնության, ոչ միայն հնարավոր չէր Սովետական Հայաստանի զարգացման ներկա աստիճանը և հայ ազգի՝ որպես սոցիալիստական ազգի ծագումը, կազմավորումն ու զարգացումը, այլև հնարավոր չէր սովետական կարգերի գոյությունը։

Ռուս մեծ ժողովրդի կողմից հայ ժողովրդին ցույց տրված այդ օգնությունը գեղեցիկ կերպով պատկերված է Հայկական ԱՍՌ Հիմնի հետևյալ խոսքերում.

Մեծ Ռուսիան մեզ եղբայրության ձեռք մեկնեց,
Մենք կկրտեցինք ամրակուռ նոր պետություն,
Ոչ մի ոսոխ չի կարող ծնկի բերել
Անսասան ժողովրդին մեր հնագույն։

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 5, Երևան, 1948 թ., էջ 109։
[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 12, Երևան, 1949 թ., էջ 413-414։

Այսպիսով, ի հակադրություն հին, բուրժուական ազգերի, որոնց զարգացումը ընթանում է անվստահության ու մշտական ընդհարումների ճանապարհով, որոնց միջև պարբերաբար տեղի են ունենում պատերազմներ, միշտ իշխում են ուժեղները, ոտնահարվում են թույլ ազգերի իրավունքները և առհասարակ բացակայում է իրավահավասարությունը, նոր, սոցիալիստական ազգերի միջև հաստատված է հարաճուն ամրապնդվող եղբայրական դաշինք և համագործակցություն, քաղաքական-բարոյական միասնություն, որի շնորհիվ է՛լ ավելի է մեծանում մեր սովետական պետության հզորությունը։ Ըստ որում սովետական ժողովուրդների եղբայրական բարեկամության գործում առաջատար դերը պատկանում է ռուս ականավոր ազգին։

Իմպերիալիստական, թալանչիական պատերազմների հետևանքով և թյուրքական դավիչների ջարդարարական քաղաքականությունից պաշտպանվելու նպատակով, ինչպես հայտնի է, նախասովետական շրջանում հարյուր հազարավոր հայեր, թողնելով իրենց հայրենի հողը, ցրիվ են եկել աշխարհի տարբեր մասերում՝ կապիտալիստական տարբեր երկրներում։ «Արևմտյան տերությունների կեղծավոր քաղաքականությունը հայերին հասցրել էր թշվառ և իրավազուրկ դրության։ Այդ նողկալի քաղաքականությունը ենիչերական Թյուրքիային հնարավորություն տվեց կազմակերպելու հայ ժողովրդի մասսայական բնաջնջումը, ստիպելով նրա զավակներին դիր ու ցան լինել ամբողջ աշխարհով մեկ»[1]։ Արտասահմանում գտնվող հայ աշխատավորներն ամենադաժան շահագործման և ազգային ճնշման են ենթարկվում ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Անգլիայի և մյուս երկրների ռեակցիոն ուժերի կողմից։ Իմպերիալիստական ռեակցիայի պայմաններում նրանք ոչնչացվում և ասիմիլիացիայի են ենթարկվում բուրժուական ազգերի կողմից։ Կապիտալիստական երկրներում տառապող հայ աշխատավորները մեծ ուշադրությամբ հետևում են Սովետական Հայաստանի տնտեսական և կուլտուրական զարգացման ընթացքին, իր երջանիկ ապագան կերտող սոցիալիստական հայ ազգի նվաճումներին, ամեն կերպ ձգտելով վերադառնալ հայրենիք, փրկվել դաժան շահագործումից և ասիմիլացիայից։ Եվ չնայած հայ ժողովրդի ոխերիմ թշնամիների՝ դաշնակ թափթրփուկների ու մյուս կոնտրռևոլուցիոն ուժերի բոլոր ջանքերին՝ շփոթեցնելու արտասահմանյան հայ աշխատավորությանը և պահելու կապիտալիստական շահագործման մեջ՝ նրանք անսահման մեծ ձգտում ունեն վերադառնալու Սովետական Հայաստան և մասնակից դառնալու կոմունիստական հասարակակարգի կառուցման պատմական գործին։

Բոլշևիկների պարտիայի ու Սովետական կառավարության, հայ ժողովրդի մեծ ազատարարներ Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի հայրական հոգատարության շնորհիվ դեռևս ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին՝ 1921—1925 թվականներին կապիտալիստական տարբեր երկրներից Սովետական Հայաստան վերադարձան մոտ 25 հազար հայ աշխատավորներ[2]։ Հետագա տարիներին, մինչև Սովետական Միության 1941—

[1] Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Գր. Հարությունյանի ճառից, արտասանված Երևանում Ի. Վ. Ստալինի մոնումենտ-քանդակի բացմանը նվիրված միտինգում, «Սովետական Հայաստան», 1950 թ., նոյեմբերի 30։

[2] «Խորհրդային Հայաստան 1920—1925 թթ.», ժողվածու, Երևան, 1926 թ., էջ 30 և Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ 40 113, գործ 494, թ. 7։

1945 թթ. Հայրենական Մեծ պատերազմը, տարբեր ժամանակներում Սովետական Հայաստան են վերադարձել ևս մոտ 10,000 հայ աշխատավորներ։ Հայրենական մեծ պատերազմից հետո, Սովետական Միության կառավարության 1945 թվականի նոյեմբերի 21-ի որոշման հիման վրա 1946—1947 թվականներին ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Եգիպտոսից, Սիրիայից, Իրանից և ուրիշ երկրներից Սովետական Հայաստան վերադարձան մոտ 90,000 հայ աշխատավորներ, որոնք ներկայումս մեր ռեսպուբլիկայում աշխատում են սոցիալիստական շինարարության տարբեր ընդավառներում։ Այսպիսով Սովետական իշխանության տարիներին կապիտալիստական երկրներից Հայրենիք են վերադարձել մոտ 125 հազար հայ աշխատավորներ։

1941—1945 թթ. Հայրենական Մեծ պատերազմում կատաղի թշնամու դեմ մղված դաժան պայքարում մեր երկրի սոցիալիստական ազգերն ու ժողովուրդները պաշտպանեցին ոչ միայն իրենց ազատությունն ու անկախությունը, այլև ամբողջ Սովետական Միության, մեր սոցիալիստական մեծ Հայրենիքի ազատությունն ու անկախությունը։ Մեր բոլոր ժողովուրդների հերոսական պայքարի ու աշխատանքի պտուղները, որոնք ձեռք են բերված Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակով։ Հայրենական մեծ պատերազմին իր ակտիվ մասնակցությունը ցույց տվեց նաև սոցիալիստական հայ ազգը, պատվով կատարելով իր պարտքը մեր մեծ Հայրենիքի հանդեպ. «Հայրենական պատերազմի տարիներին — ասված է Հայաստանում սովետական կարգերի հաստատման 25-ամյակի առթիվ ՍՍՌՄ Ժողկոմսովետի և Համկ(բ)Պ Կենտկոմի ողջույնի հեռագրում — հայ ժողովուրդը պատվով կատարեց իր պարտքը Հայրենիքի հանդեպ։ Հայ ռազմիկները Սովետական Միության մյուս ժողովուրդների զավակների հետ միասին անձնվիրաբար պաշտպանում էին մեր Հայրենիքի ազատությունն ու անկախությունը։ Հայաստանի բանվորները, կոլտնտեսականները և ինտելիգենցիան անդուլ կերպով աշխատում էին թշնամու դեմ հաղթանակ նվաճելու համար»[1]։

Շնորհիվ Սովետական Միության սոցիալիստական ազգերի և ժողովուրդների լենինյան-ստալինյան բարեկամության, բարոյական-քաղաքական միասնության, սովետական կենսարար հայրենասիրության, Հայրենական պատերազմի ժամանակ Սովետական Միությունը ցուցաբերեց այնպիսի կայունություն և հզորություն, որպիսին չի ցուցաբերել և չէր կարող ցուցաբերել պատմության մեջ ոչ մի այլ պետություն։

Խոսելով սովետական ժողովրդի այդ հոյակապ հատկությունների մասին, Ա. Ա. Ժդանովը ասել է. «Ուրիշ որտե՞ղ կգտնեք դուք այնպիսի ժողովուրդ և այնպիսի երկիր, ինչպես մեկ մոտ։ Որտեղ դուք կգտնեք մարդկանց այնպիսի հոյակապ հատկություններ, ինչպիսիք մեր սովետական ժողովուրդը ցույց տվեց Հայրենական Մեծ պատերազմում և ինչպիսիք նա յուրաքանչյուր օր դրսևորում է աշխատանքային գործերում...»[2]։

Հայրենական Մեծ պատերազմում ջախջախելով սոցիալիզմի և դեմոկրատիայի կատաղի թշնամիներին՝ գերմանական ֆաշիստներին, ճապոնական իմպերիալիստներին և ձեռք բերելով համաշխարհային պատմական հաղթա-

[1] «Սովետական Հայաստան», 1945 թ., նոյեմբերի 25։

[2] Ա. Ա. Ժդանով, «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին, Հայպետհրատ, Երևան, 1946 թ., էջ 33—34։

նակներ, սովետական ժողովուրդն իր հանճարեղ առաջնորդ ընկեր Ստալինի, բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ ձեռնամուխ եղավ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման հետպատերազմյան հնգամյակի կատարմանը, որը հսկայական մասշտաբի աշխատանքներ էր նախատեսում։

Սովետական ժողովուրդն իր նվիրված և ստեղծագործական աշխատանքով հնգամյա պլանը կատարեց փայլուն արդյունքներով։ Պլանով նախատեսված էր, որ հնգամյակի վերջում՝ 1950 թվականին ամբողջ արդյունաբերության արտադրանքը 1940 թվականի համեմատությամբ պետք է ավելանար 48 տոկոսով, փաստորեն ավելացել է 73 տոկոսով։ Սոցիալիստական ընդլայնած վերարտադրության օրենքի հիման վրա մեր արդյունաբերությունը հաջողությամբ զարգանում է ու առաջ ընթանում։ ՍՍՌՄ ամբողջ արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերը 1940 թվականի համեմատությամբ 1950 թվականին ավելացել են 58 տոկոսով։ Այդ նույն ժամանակամիջոցում ազգային եկամուտը պլանով նախատեսված 38 տոկոսի փոխարեն ավելացել է 64 տոկոսով։

Հնգամյա պլանը մեծ հաջողությամբ կատարվել է սոցիալիստական գյուղատնտեսության բնագավառում։ Էլ ավելի ամրապնդվել են կոլտնտեսությունները, բարձրացել է ՄՏԿ-ների դերը և ուժեղացել է գյուղատնտեսության նյութական-տեխնիկական բազան։ Մեծ չափով բարձրացել է աշխատավորների նյութական կենցաղային դրությունը։ Հնգամյակի ընթացքում Սովետական կառավարության կողմից մասսայական սպառման ապրանքների գների իջեցման շնորհիվ բանվոր-ծառայողների և կոլտնտեսականների եկամուտների գումարը 1940 թվականի համեմատությամբ 1950 թվականին աճել է 62 տոկոսով[1]։

Այդ բոլոր հաղթանակների շնորհիվ ավելի ու ավելի է հզորացել մեր մեծ Հայրենիքը, մեր սոցիալիստական պետությունը։ «Սովետական ժողովուրդը, —գրում է «Պրավդան» իր առաջնորդողում,— որը համաշխարհային—պատմական հաղթանակ տարավ Հայրենական Մեծ պատերազմում, հետպատերազմյան հնգամյակի կատարումով է՛լ ավելի ամրապնդեց խաղաղության անխորտակ պատվար սոցիալիստական Հայրենիքի հզորությունը»[2]։

Հետպատերազմյան ստալինյան հնգամյակում բուռն տեմպերով աճեց ու հզորացավ նաև Սովետական Հայաստանի էկոնոմիկան, որը հանդիսանում է Սովետական Միության էկոնոմիկայի բաղկացուցիչ մասը։ Այդ տարիներին ռեսպուբլիկայում կառուցվել և վերակառուցվել են ավելի քան 30 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, արագությամբ զարգանում է էլեկտրամեքենաշինությունը, դազգահաշինությունը, գյուղատնտեսական մեքենաշինությունը։ ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարում (1951 թ.) խոսելով այդ մասին, ընկեր Տր. Հարությունյանը նշել է. «Հաշվետու ժամանակաշրջանում հաջողությամբ է կատարվել Հայաստանի Կ(բ)Պ 14-րդ համագումարի ցուցումը՝ մեքենաշինությունն ամեն կերպ զարգացնելու

[1] ՍՍՌՄ Պետպլանի և ՍՍՌՄ կենտ. վիճակագրական վարչության հաղորդագրությունը հնգամյակի կատարման արդյունքների մասին, «Սովետական Հայաստան», 18 ապրիլի, 1951 թ.։

[2] «Պրավդա», 17 ապրիլի 1951 թ.։

մասին։ Արտադրության 1950 թվականի պլանը կատարված է 109,5 տոկոսով, ըստ որում համախառն արտադրանքի թողարկումը 1948 թվականի համեմատությամբ ավելացել է ավելի քան երեք անգամ»[1]։ Հնգամյակում արագ կերպով աճել են էլեկտրաէներգիայի արտադրությունը, պղնձի, քիմիական, շինարարական նյութերի, թեթև, սննդի արդյունաբերությունը և արդյունաբերության մյուս ճյուղերը։ «Ռեսպուբլիկայի ամբողջ արդյունաբերությունը համախառն արտադրանքի պետական պլանը 1950 թվականին կատարեց 103 տոկոսով, դրանով իսկ հնգամյա պլանով նախատեսված մակարդակը, մինչպատերազմյան 1940 թվականի համեմատությամբ, 2.1 անգամով փոխարեն գերազանցելով 2,4 անգամ»։

Հետպատերազմյան հնգամյակում արդյունաբերության վերելքին զուգընթաց մեծ հաջողություններ է հասել նաև մեր ռեսպուբլիկայի սոցիալիստական գյուղատնտեսությունը։ Աճել և ամրացել է կոլտնտեսությունների հանրային տնտեսությունը, զգալի չափով բարելավվել է հողի մշակությունը, բարձրացել է բերքատվությունը։ Մեծ չափով ուժեղացել է սոցիալիստական գյուղատնտեսության տեխնիկական բազան։ Այդ բոլորի շնորհիվ 1940 թվականի համեմատությամբ 1950 թվականին հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը բարձրացել է 53 տոկոսով։ Մեծ չափով աճել են այգեգործությունը և տեխնիկական կուլտուրաների մշակությունը, սոցիալիստական անասնապահությունը։ Այդ զարգացման և հետագա առաջընթացի գործում մի նոր քայլ է հանդիսանում կոլտնտեսությունների խոշորացումը։

Հնգամյակի կատարման և գերակատարման շնորհիվ արմատապես բարելավվել է աշխատավորների նյութական և կուլտուրական վիճակը։ ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարում իր զեկուցման մեջ ընկեր Դր. Հարությունյանը նշեց, որ հաշվետու շրջանում շարունակվում էր աշխատավարձի ֆոնդի անշեղ աճը, որ պարենամթերքի ու արդյունաբերական ապրանքների գների իջեցման շնորհիվ խիստ կերպով բարձրացել է բանվորների և ծառայողների ռեալ աշխատավարձը։ 1945 թվականի համեմատ աշխատավարձի ֆոնդը 1950 թվականին բարձրացել է 130,6 տոկոսով, այսինքն ավելի քան երկու անգամ, իսկ 1948 թվականի համեմատությամբ՝ 32,4 տոկոսով[3]։

* * *

Հետպատերազմյան հնգամյակում նոր, ավելի բարձր աստիճանի հասավ սոցիալիստական հայ ազգի ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան։ Տարրական, ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներում հնգամյակի ընթացքում սովորողների թիվը աճեց և 1940 թվականի համեմատությամբ 1950 թվականին ավելացավ 50 հազարով, հասնելով 312 հազարի։ Ինչպես նշեց Հայաստանի բոլշևիկների 15-րդ համագումարը, ռեսպուբլիկայի գյուղական վայրերում հաջողությամբ իրագործվում

---

[1] Դր. Հարությունյան, Հաշվետու զեկուցում ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարում ՀԿ(բ)Պ ԿԿ-ի աշխատանքի մասին, Երևան, 1951, էջ 22։

[2] Նույն տեղում, էջ 11։

[3] Նույն տեղում, էջ 13։

է յոթնամյա պարտադիր ուսուցումը, իսկ քաղաքներում՝ միջնակարգ պարտադիր ուսուցումը։ Ներկայումս ռեսպուբլիկայի գպրոցների ավելի քան 80 տոկոսը լրիվ միջնակարգ և ոչ լրիվ միջնակարգ գպրոցներ են։ Ռեսպուբլիկայի գպրոցներում դասավանդում են մոտ 15 հազար ուսուցիչներ։ 1939—1940 ուսումնական տարում ռեսպուբլիկայի ինը բարձրագույն ուսումնական հաստատությունների 7426 սովորողների փոխարեն[1], 1950—1951 ուս. տարում արդեն 17 բուհերում սովորում էին 16000 ուսանող (10500-ը սաստիկոնար բուհերում, իսկ 5500-ը՝ հեռակա[2])։ Ռեսպուբլիկայի տեխնիկումները և մյուս միջնակարգ գպրոցները հնգամյակի ընթացքում սոցիալիստական շինարարությանը տվել են 8000 մասնագետներ, բարձրագույն գպրոցները՝ 6000։

Սովետական Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի և բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային կուլտուրայի բարգավաճման ու ծաղկման զուգընթաց, կատարելագործվում և աննախընթաց վերելք է ապրում հայոց լեզուն։ «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության մեջ ընկեր Ստալինը, մերկացնելով Մառի և նրա կողմնակիցների հակամարքսիստական թեորիան լեզվի՝ որպես վերնաշենքի մասին, գիտականորեն խորը կերպով հիմնավորեց լեզվի դերն ազգային կուլտուրայի զարգացման գործում։ Լեզուն հանդիսանում է սոցիալիստական կուլտուրայի զարգացման ազգային ձևը։

«... Ներկայիս ռուսական, ուկրաինական, բելոռուսական և մյուս կուլտուրաները հանդիսանում են բովանդակությամբ սոցիալիստական և ձևով, այսինքն՝ ըստ լեզվի, ազգային»[3]։ Սակայն այդ չի նշանակում, որ կարելի է նույնացնել, իրար հետ շփոթել լեզուն և կուլտուրան, ինչպես անում են Մառը և նրա կողմնակիցները։ Ընկեր Ստալինը ուսուցանում է, որ լեզուն և կուլտուրան երկու տարբեր բաներ են։ Կուլտուրան դասակարգային է, այն կարող է լինել ֆեոդալական, բուրժուական կամ պրոլետարական։ Լեզուն, որպես մարդկանց միջև հաղորդակցության միջոց, «ստեղծված է բավարարելու համար ոչ թե միայն մեկ որևէ դասակարգի, այլ ամբողջ հասարակության, հասարակության բոլոր դասակարգերի կարիքները։ Հենց դրա համար էլ այն ստեղծված է որպես հասարակության համար միասնական և հասարակության բոլոր անդամների համար ընդհանուր համաժողովրդական լեզու»[4]։ Եթե կուլտուրան իր բովանդակությամբ փոփոխվում է հասարակության զարգացման յուրաքանչյուր նոր էտապում, ապա լեզուն պահպանվում է երկարատև ժամանակաշրջանի ընթացքում, ծառայելով ինչպես բուրժուական, նույնպես և սոցիալիստական կուլտուրային։

«Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատությամբ ընկեր Ստալինը մարքսիզմ-լենինիզմը հարստացրեց կարևորագույն մի շարք նոր դրույթներով հասարակության զարգացման օրինաչափությունների, բազիսի և վերնաշենքի, սոցիալիստական պետության, սոցիալիստական հասարակության զարգացման բնույթի, սոցիալիզմից կո-

[1] Соц. стр Арм. ССР, էջ 113։
[2] Ընկ. Գր. Հարությունյանի նույն հաշվետու զեկուցումը, էջ 61։
[3] Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 47։
[4] Նույն տեղում, էջ 15։

մունիզմին անցնելու օրինաչափությունների վերաբերյալ։ Միաժամանակ ընկեր Ստալինը գիտականորեն ուրվագծեց ազգերի և ազգային լեզուների զարգացման հեռանկարները կոմունիզմի ժամանակ։

Զինված մեծ առաջնորդի ցուցումներով, ռեսպուբլիկայի գիտնականները, պարտիական կազմակերպությունների ղեկավարությամբ, աշխատանքներ են ծավալում լեզվաբանության գործում Մառի և սրա աշակերտների հասցրած վնասները լիկվիդացնելու, թույլ տրված սխալները ուղղելու և մարքսիստական լեզվաբանական նոր աշխատություններ տալու ուղղությամբ։ Այդ հանճարեղ աշխատության լույսի տակ նոր վերելք է ապրում սովետահայ լեզվաբանությունը։

Ղեկավարվելով իդեոլոգիական հարցերի վերաբերյալ ՀամԿ(բ)Պ կենտկոմի պատմական որոշումներով, Սովետական Հայաստանի արվեստի և գրականության աշխատողները վերջին տարիներին զգալի հաջողությունների են հասել։ Թատրոնների և օպերայի ռեպերտուարները հարստացրել են սովետական մարդկանց ժամանակակից կյանքը և կոմունիզմի համար տարվող հերոսական աշխատանքն ու պայքարը արտացոլող երկերով։

Սովետահայ գրողներից շատերն իրենց նոր ստեղծագործություններով պատկերում են մեր բազմաբովանդակ կյանքը։ Նրանց աշխատությունները տոգորված են սովետական հայրենասիրությամբ, անհուն սիրով Սովետական Հայրենիքի նկատմամբ։ Այդ հաջողություններն առանձնապես աչքի են ընկնում սովետահայ պոեզիայի բնագավառում։ Ուշագրավ է երիտասարդ բանաստեղծ Ռ. Էմինի «Նոր ճանապարհ» բանաստեղծությունների ժողովածուն, որը ցույց է տալիս սովետական հասարակարգի պայմաններում հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած մեծ վերափոխումները, կոմունիզմ կառուցողների աշխատանքային սխրագործությունները։ Շնորհալի բանաստեղծի այս ժողովածուն արժանացել է Ստալինյան մրցանակի։ Ստեղծագործական նոր հաջողությունների են հասել բանաստեղծներ Ն. Զարյանը, Գ. Սարյանը, Ս. Կապուտիկյանը, Գ. Բորյանը, Հ. Շիրազը, Ա. Գրաշին և մյուսները, որոնք իրենց գրվածքներով պատկերում են կոմունիզմի համար պայքարող սովետական մարդկանց կյանքը, սովետական հայրենասիրությունը և սոցիալիստական ազգերի եղբայրական բարեկամությունը։

Առաջնորդվելով ՀամԿ(բ)Պ Կենտկոմի որոշումներով իդեոլոգիական հարցերի մասին, «Հայաստանի կոմպոզիտորները, հաղթահարելով ֆորմալիզմի, դաղափարազրկության արտահայտությունները, ստեղծեցին զանազան ժանրի մի շարք հաջող երաժշտական երկեր, որոնց թվում պետք է նշել Ա. Հարությունյանի «Հայրենիք» կանտատան, Ա. Բարաջանյանի «Հերոսական բալլադան», Էդ. Միրզոյանի «Հայաստան» կանտատան, Կ. Զաքարյանի «Փառք Հայրենիքին», Գ. Զևրոտարյանի պրելյուդները և այլ կոմպոզիտորների մի ամբողջ շարք երկեր»[1]։

Հետպատերազմյան հնգամյակում մեծ չափով աճել են ռեսպուբլիկայի գիտա-հետազոտական հիմնարկները, որոնց քանակը նախապատերազմյան

[1] Գր. Հարությունյան, Հաշվետու զեկուցում ՀԿ(բ)Պ 13-րդ համագումարում ՀԿ(բ)Պ ԿԿ-ի աշխատանքի մասին, էջ 69—70։

1940 թվականի համեմատությամբ աճել է 1,6 անգամ, իսկ նրանցում ընդգրկված գիտական աշխատողների քանակը՝ 2,5 անգամ։

Սովետական Հայաստանի գիտնականները խոշոր աշխատանք են կատարել աշխարհում ամենաառաջավոր մեր՝ սովետական գիտության զարգացման գործում։ Աստղային ասոցիացիաների մասին իրենց նոր հայտնագործություններով սովետական և համաշխարհային գիտության մեջ կարևորագույն ներդրում են կատարել մեր ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը և գիտությունների թեկնածու Բ. Մարգարյանը։ Ինչպես հայտնի է, նրանց հայտնագործությունը բարձր է գնահատվել Սովետական կառավարության կողմից և արժանացել է Ստալինյան մրցանակի։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ Ա. Ի. Ալեխանովը և Ա. Ի. Ալիխանյանը իրենց հետազոտություններով հայտնագործել են մատերիայի նոր, մինչև այժմ գիտությանը անհայտ մասնիկները՝ վարիտրոնները։ Բարձր գնահատելով նրանց հայտնագործությունը, սովետական կառավարությունը Ա. Ի. Ալիխանովին և Ա. Ի. Ալիխանյանին նույնպես շնորհել է Ստալինյան մրցանակ։ Սոցիալիստական արդյունաբերության զարգացմանը նպաստող կարևորագույն աշխատանք են կատարել Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Քիմիական ինստիտուտը և մյուս ինստիտուտները։ Սովետական Հայաստանի գիտնականներն ակտիվ կերպով մասնակցում են կոմունիզմի մեծ կառուցումների հետ կապված մի շարք գիտական պրոբլեմների մշակման աշխատանքներին։ Այդ ուղղությամբ աչքի ընկնող աշխատանք է կատարել Ջրաէներգետիկ ինստիտուտի գիտական կոլեկտիվը Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Եղիազարյանի գլխավորությամբ։ Զգալի աշխատանքներ են կատարել նաև Գեոլոգիական և Շինությունների ու կառուցումների ինստիտուտները։ Ինչպես ասված է Հայաստանի բոլշևիկների 15-րդ համագումարի բանաձևում, ռեսպուբլիկայի «Գիտա-հետազոտական հիմնարկների մեծ մասի աշխատանքն այդ ժամանակաշրջանում (այսինքն հաշվետու շրջանում—1948 թվականի վերջերից 1951 թ. սկզբները—Ա. Հ.) ընթանում էր սովետական գիտության հետագա զարգացմանը և ժողովրդական տնտեսության պրակտիկ պրոբլեմների լուծմանը նպաստող գիտական աշխատությունների ստեղծման և հետազոտությունների գծով։ Որոշակի հաջողություններ կան նաև հասարակական գիտությունների բնագավառում»[1]։

Ինչպես ամբողջ Սովետական Միությունում, նույնպես և Սովետական Հայաստանում աշխատավորների շարքերից դուրս եկած իսկական ժողովրդական ինտելիգենցիան բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության հետ միասին ակտիվ կերպով մասնակցում է կոմունիզմի կառուցման մեծ գործին։ Ռեսպուբլիկայում հազարավոր բանվորներ և գյուղացիներ ստացել են միջնակարգ և բարձրագույն կրթություն, դարձել են պետական և պարտիական գործիչներ, գիտնականներ, ինժեներներ, ուսուցիչներ, բժիշկներ, գյուղատնտեսներ, գրականագետներ և արվեստի աշխատողներ։ Մարդկային հասարակության պատմության ընթաց-

[1] ՀԿ(բ)Կ 15-րդ համագումարի բանաձևը ՀԿ(բ)Կ կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ, Երևան, 1951 թ., էջ 7։

քում առաջին անգամ սովետական կարգերը գիտությունը դարձրին ժողովրդական մասսաների սեփականություն։ Լենինի-Ստալինի պարտիայի ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ ամբողջ Սովետական Միությունում և նրա բաղկացուցիչ մասը կազմող Սովետական Հայաստանում տեղի ունեցած հսկայական տեխնիկական և կուլտուրական առաջադիմությունը արմատական փոփոխություններ է մտցրել մարդկանց հոգևոր կերպարանքի մեջ։ Ռեսպուբլիկայում հազարավոր բանվորներ, կոլտնտեսականներ և ծառայողներ սովորում են բարձրագույն դպրոցներում, կուրսերում, տեխնիկումներում, տարբեր դասընթացներում։ Այդ բոլորի շնորհիվ ներկայումս ոչ թե հազվագյուտ բացառություն է, այլ սովորական երևույթ է, երբ շարքային բանվորը կամ կոլտնտեսականը ունեն յոթնամյա կամ միջնակարգ կրթություն։ Ռեսպուբլիկայում մեծ չափով աճել են կուլտուրայի կենտրոնները՝ թատրոնները, կինոները, բանվորական ակումբները, գրադարանները։ Կոլտնտեսային գյուղի կուլտուրական աշխատանքի կենտրոններն են հանդիսանում լայն ծավալ ստացած կուլտուրայի տները, ակումբները, կարմիր անկյունները, կինոն։ Կոլտնտեսային գյուղի կուլտուրական մակարդակը գնալով մոտենում է քաղաքի մակարդակին։

Սոցիալիստական գյուղատնտեսության առաջավորները օժտված են նույնպիսի հասարակական և աշխատանքային սովորություններով, նույնպիսի շահերով, որոնցով ապրում, ստեղծագործում ու կոմունիզմի համար պայքարում են սոցիալիստական ինդուստրիայի առաջավոր մարդիկ։ Այդ հանդիսանում է բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության էլ ավելի մերձեցման, գյուղի և քաղաքի միջև դեռևս գոյություն ունեցող տարբերության լիկվիդացման պրակտիկ ուղիներից մեկը։

Սովետական երկրում հաստատված է ժողովրդի լիակատար քաղաքական-բարոյական միասնություն, որը հանդիսանում է մեր հասարակության առաջմղիչ կարևորագույն ուժերից մեկը։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիան, խորտակելով շահագործողների տիրապետությունը և հաստատելով պրոլետարական դիկտատուրա, ոչ միայն արմատապես փոխեց հասարակության նյութական կյանքի պայմանները, այլև դրա հիման վրա՝ հասարակության հոգևոր կյանքի ձևերը։ Ինչպես նշում է ընկեր Ստալինը, այդ մեծագույն ռևոլուցիա էր բանվոր դասակարգի մտքի մեջ, նրա իդեոլոգիայի մեջ։ Սոցիալիստական շինարարության անցած տարիների ընթացքում մեր երկրի էկոնոմիկայում տեղի ունեցած արմատական փոփոխություններին զուգընթաց, փոխվել է նաև սովետական մարդկանց գիտակցությունը, նրանց հոգևոր նկարագիրը։ Նրանք աճել են գաղափարապես։

«Պետք է ընդունել,—ասում է ընկեր Մոլոտովը,—որ մեր ռևոլուցիայի կարևորագույն նվաճումը մարդկանց, որպես սովետական հայրենասերների, նոր հոգևոր նկարագիրն է ու գաղափարական աճումը։ Այս բանը վերաբերում է սովետական բոլոր ժողովուրդներին՝ ինչպես քաղաքին, այնպես էլ գյուղին, ինչպես ֆիզիկական աշխատանքի մարդկանց, այնպես էլ մտավոր աշխատանքի մարդկանց։ Այդ է իրոք Հոկտեմբերյան ռևոլուցիայի մեծագույն հաջողությունը, որը համաշխարհային պատմական նշանակություն ունի։

Այժմ սովետական մարդիկ այն չեն, ինչ որ էին երեսուն տարի առաջ[1]։

Սովետական մարդկանց հոգևոր կյանքի, գաղափարական աճի բնորոշ կողմերն են հանդիսանում՝ կոլեկտիվ ստեղծագործությունը և սոցիալիստական վերաբերմունքը դեպի հանրային աշխատանքը, նոր, սոցիալիստական կարգապահությունը և ռևոլուցիոն խիզախությունը, հոգու կայտառությունը և բնավորության կայունությունը, ազնվությունը և նորարարությունը, հումանիզմը և աշխատասիրությունը, ինտերնացիոնալիզմը և սովետական կենսատու հայրենասիրությունը։

Ր հակադրություն բուրժուական, իր բնույթով շովինիստական հայրենասիրության, Սովետական Միության սոցիալիստական ազգերի ու ժողովուրդների մոտ, այդ թվում նաև սոցիալիստական հայ ազգի մոտ ծաղկում և ամրապնդվում է սովետական հայրենասիրությունը, ժողովրդական մասսաների սերը և նվիրվածությունը մեր հզոր սոցիալիստական Հայրենիքի նկատմամբ, մեր համաշխարհային-պատմական հաղթանակների կազմակերպիչ ու ոգեշնչող Լենինի-Ստալինի պարտիայի, մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինի նկատմամբ։ Որպես մեր հասարակության առաջմղիչ ուժերից մեկը, սովետական հայրենասիրությունը վառ կերպով արտահայտում է սովետական ազգային հպարտությունը։ Սովետական կենսատու հայրենասիրությունը, որով օժտված են մեր երկրի բոլոր սոցիալիստական ազգերն ու ժողովուրդները, սերտորեն շաղկապված է պրոլետարական ինտերնացիոնալիզմի, բոլոր երկրների աշխատավորների համերաշխության, փոխադարձ վստահության և եղբայրական օգնության զգացմունքի հետ։

Բնորոշելով սովետական հայրենասիրության ամենահիմնական գծերը, ընկեր Ստալինը ասում է.

«Սովետական հայրենասիրության ուժն այն է, որ նրա հիմքը ոչ թե ռասայական կամ նացիոնալիստական նախապաշարմունքներն են, այլ ժողովրդի խորին նվիրվածությունն ու հավատարմությունն իր Սովետական Հայրենիքին, մեր երկրի բոլոր ազգերի աշխատավորության եղբայրական համագործակցությունը։ Սովետական հայրենասիրության մեջ ներդաշնակորեն զուգակցվում են ժողովուրդների ազգային տրադիցիաները և Սովետական Միության բոլոր աշխատավորների ընդհանուր կենսական շահերը։ Սովետական հայրենասիրությունը մեր երկրի բոլոր ազգերին ու ժողովուրդներին չի բաժանում, այլ ընդհակառակը՝ համախմբում է եղբայրական միասնական ընտանիքի մեջ։ Դրա մեջ պետք է տեսնել Սովետական Միության ժողովուրդների անխորտակ և ավելի ու ավելի ամրապնդվող բարեկամության հիմքերը»[2]։

Կապիտալիստական ոչ մի երկրում չի հրատարակվել և չի կարող հրատարակվել ժողովրդական մասսաների քաղաքական-կուլտուրական վերելքին նպաստող այնպիսի հսկայական տիրաժով գրականություն, ինչպես

---

[1] Վ. Մ. Մոլոտով, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի 30-ամյակը, Երևան, 1948 թ., էջ 29։

[2] Ի. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի մասին, Հայպետհրատ, Երևան, 1950 թ., էջ 192։

մեկ մոտ՝ Սովետական Միությունում և նրա բաղկացուցիչ մասը կազմող Սովետական Հայաստանում։

Հսկայական ծավալ է ընդունել մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների հրատարակությունը Սովետական Միության ժողովուրդների լեզուներով։ Ինչպես նշում է «Պրավդան» իր առաջնորդողում, «Կոմունիստական պարտիան կազմակերպեց Մարքսի, Էնգելսի, Լենինի և Ստալինի աշխատությունների հրատարակումը հսկայական մասշտաբներով։ Սովետական իշխանության տարիներին մարքսիզմ-լենինիզմի կլասիկների երկերը մեր երկրում հրատարակվել են ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների լեզուներով 889 միլիոն օրինակ ընդհանուր տիրաժով»[1]։

Մարքիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունները թարգմանվել և հսկայական տիրաժով լույս են տեսել նաև հայերեն լեզվով։ Մարքսի-Էնգելսի-Լենինի ինստիտուտի Հայկական ֆիլիալն արդեն լույս է ընծայել Վ. Ի. Լենինի երկերի 4-րդ հրատարակության 30 հատորները, մնացած 5 հատորների հրատարակումը հայերեն լեզվով ավարտվելու է 1952 թվականի ընթացքում։ Հայերեն հրատարակված են ընկեր Ստալինի երկերի 13 հատորները։ Մի քանի անգամ և մեծ տիրաժով լույս են տեսել Համկ(բ)Պ Պատմության համառոտ դասընթացը, Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի շատ աշխատությունները։ Հայաստանում սովետական իշխանության հաստատման ժամանակվանից՝ 1920 թ. մինչև 1949 թվականի վերջը Կ. Մարքսի աշխատություններից հայերեն լեզվով, առանձին գրքերով եղել է 22 հրատարակություն՝ 167.500 ընդհանուր տիրաժով։ Դրանց թվում կան մի շարք աշխատություններ, որոնք հրատարակվել են մի քանի անգամ։ Մարքսի և Էնգելսի համատեղ աշխատությունները՝ առանձին գրքերով լույս են տեսել 14 հրատարակությամբ՝ 89.000 օրինակ ընդհանուր տիրաժով։ Էնգելսի աշխատություններից եղել է 36 հրատարակություն՝ 235.500 ընդհանուր տիրաժով։ Դրանցից որոշ աշխատություններ հրատարակվել են մի քանի անգամ։

Այդ նույն ժամանակամիջոցում Վ. Ի. Լենինի աշխատություններից առանձին գրքերով եղել է 166 հրատարակություն՝ 984.900 օրինակ ընդհանուր տիրաժով։ Հիշյալ հրատարակությունների թվում կան մի քանի աշխատություններ, որոնք հրատարակվել են շատ անգամ։ Ընկեր Ստալինի աշխատություններից առանձին գրքույկով լույս է տեսել 191 հրատարակություն՝ 3.086.300 օրինակ ընդհանուր տիրաժով։ Այդ թվից մի շարք գործեր հրատարակվել են բազմաթիվ անգամ[2]։

Այսպիսով, սովետական իշխանության գոյության 29 տարիների ընթացքում՝ 1920—1949 թթ. Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններից առանձին գրքույկներով լույս են տեսել 429 հրատարակություն՝ 4.563.200 ընդհանուր տիրաժով։

«Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունները դարձել են միլիոնավոր բանվորների, կոլտնտեսականների, ինտելիգենցիայի սեփականությունը, նրանց ոգեշունչ ստեղծագործության աղբյուրը։ Դրանք աշխա-

[1] «Պրավդա», 1952 թ. հունվարի 17-ի առաջնորդողից։

[2] Տես Լ. Մելքումյանի և Վ. Կարմենյանի կազմած «Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի աշխատությունների հայերեն հրատարակությունների բիբլիոգրաֆիա», Հայպետհրատ, Երևան, 1950 թ., էջ 12—14։

տավորների մեջ մշակում են կոմունիստական բարձր գիտակցականություն, ձևավորում են սովետական մարդկանց աշխարհայացքը»[1]։

Շնորհիվ լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության կենսագործման, սովետական իշխանության տարիներին հայերեն լեզվով հրատարակվել են ռուսական և համաշխարհային գրականության կլասիկներից շատերի և եղբայրական սովետական ռեսպուբլիկաների նշանավոր գրողների աշխատությունները։ Այդ գործը մեծ ծավալ է ստացել առանձնապես վերջին տարիների ընթացքում։ Մեր ռեսպուբլիկայի աշխատավորները ներկայումս հնարավորություն ունեն մայրենի լեզվով ընթերցելու ռուսական և համաշխարհային գրականության այնպիսի կլասիկների աշխատությունները, ինչպիսիք են Լ. Տոլստոյը, Պուշկինը, Լերմոնտովը, Գոգոլը և մյուսները։ Նրանք հնարավորություն ունեն մայրենի լեզվով ընթերցելու սովետական գրականության ամենաաչքի ընկնող գործերը, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մարտնչող առաջավոր գրողների գործերը։

Հայ ժողովրդի նշանավոր ռևոլուցիոն-դեմոկրատ գործիչների աշխատությունները, հայ գրողների աչքի ընկնող երկերը և ժողովրդական ստեղծագործությունների որոշ մասն իրենց հերթին թարգմանվել և լույս են տեսել ինչպես ռուսերեն լեզվով, նույնպես և սովետական մի շարք այլ ժողովուրդների լեզուներով։

Սովետական իշխանության տարիներին ռեսպուբլիկայում մեծ չափով ծավալվել է ազգային լեզվով պարբերական մամուլը, որի օգնությամբ բոլշևիկների պարտիան ամեն օր, ամեն ժամ խոսում և ամուր կապ է պահպանում աշխատավորական մասսաների հետ։ Եթե նախասովետական շրջանում հայերեն լեզվով հատ ու կենտ թերթեր էին լույս տեսնում, այն էլ մեծ մասամբ Հայաստանից դուրս, ապա ներկայումս, 1952 թ. սկզբին, Սովետական Հայաստանում լույս են տեսնում ավելի քան 56 անուն գործարանային, շրջանային, քաղաքային ու ռեսպուբլիկական թերթեր։ Միայն Երևանում հրատարակվում է 15 անուն թերթ։

Սովետական երկրում յուրաքանչյուր վերափոխություն, յուրաքանչյուր նոր ձեռնարկում էկոնոմիկայի, կուլտուրայի և մյուս բնագավառներում, կատարվում է ամենաառաջավոր գիտության՝ սովետական գիտության հիման վրա, որն անշեղորեն առաջնորդվում է մարքսիզմ-լենինիզմի ռևոլուցիոն թեորիայով։ Սովետական առաջավոր գիտությունը համարձակ կերպով բաց է անում մարդկության երջանիկ ապագայի վարագույրը, ժողովրդին գինում է հասարակության զարգացման օրենքներով։ Մեր մեծ Հայրենիքի բազմազգ և բազմամիլիոն աշխատավորները, նրանց հետ նաև սոցիալիստական հայ ազգը, կոմունիզմի համար մղվող պայքարում հաստատ կերպով առաջնորդվում են մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ ուսմունքով, սովետական առաջավոր գիտության նվաճումներով։

Չնայած այս բոլորին, դեռևս առանձին մարդկանց գիտակցության մեջ մնում են կապիտալիզմի մնացուկները, որոնք արտահայտվում են սոցիալիստական սեփականության նկատմամբ անփույթ վերաբերմունքի, աշխատանքից խուսափելու, բյուրոկրատիզմի, թափթփվածության, աշխատանքում եղած թերությունների նկատմամբ անտարբերության և մի

[1] «Պրավդա»-ի 1952 թ. հունվարի 17-ի առաջնորդողից։

շարք այլ մոմենտներով։ Մարդկանց գիտակցության միջից կապիտալիզմի այդ մնացուկների լիկվիդացման գործում մեծ նշանակություն ունի կոմունիստական դաստիարակությունը, որին Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը միշտ էլ մեծ տեղ են տվել։ Զինված մարքսիզմ-լենինիզմի ուսմունքով, բոլշևիկների պարտիան անդադրում կերպով առաջ է տանում մասսաների կոմունիստական դաստիարակությունը։

Այս բոլոր հաջողությունները ցույց են տալիս, որ եթե հին, բուրժուական ազգերը շահագործող դասակարգերի տիրապետության հետևանքով տնտեսական ու կուլտուրական հետամնացության մեջ էին ապրում և զուրկ էին զարգացման հնարավորությունից, ապա նոր սոցիալիստական ազգերը, նրանց թվում նաև հայ ազգը, շնորհիվ լենինյան-ստալինյան իմաստուն ազգային քաղաքականության անշեղ կենսագործման, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում հաղթական կերպով առաջ են գնում սոցիալիզմից դեպի կոմունիզմ։

Սոցիալիզմի կառուցման գործում ձեռք բերված հաջողությունները, հայ ժողովրդի վերածնունդը և նրա, որպես սոցիալիստական ազգի կազմակերպումն ու զարգացումը, Սովետական Միության սոցիալիստական ազգերի եղբայրական ընտանիքում հաստատ առաջընթացը սոցիալիզմից դեպի կոմունիզմ, փայլուն կերպով ցույց են տալիս հայ ժողովրդի մեծ ազատարար ընկեր Ստալինի 1920 թվականին ասած իմաստուն խոսքերի իրականացումը։ «Ո՛չ Անգլիայի, հայկական շահերի «դարավոր պաշտպանի» կեղծ հավաստիացումները, ոչ Վիլսոնի տխրահռչակ տասնևչորս կետերը, ոչ Ազգերի լիգայի մեծադղորդ խոստումները Հայաստանի կառավարման իր «մանդատով»—չկարողացան (և չէի՛ն կարող) փրկել Հայաստանը կոտորածից ու ֆիզիկական ընաջնջումից։ Միայն Սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն»[1]։

* * *

Ինչպես ուսուցանում է մարքսիզմ-լենինիզմը, ազգը պատմական կատեգորիա է։ Բուրժուական ազգերը ծագել, կազմավորվել ու զարգացել են ֆեոդալիզմի քայքայման և կապիտալիզի հաղթանակի պայմաններում։ Սոցիալիստական ազգերը ծագել, կազմավորվել ու զարգանում են կապիտալիզմի տապալումից հետո, պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիստական շինարարության պայմաններում։ Լինելով պատմական որոշ ժամանակաշրջանի արդյունք, հասկանալի է, որ ազգերը մշտնջենական չեն, որ նրանք վերացվելու են հասարակության պատմական զարգացման ավելի բարձր շրջանում՝ ձուլվելով իրար հետ և դառնալով մեկ ընդհանուր ժողովուրդ։ Այդպես դնելով հարցը, մարքսիզմ-լենինիզմը միաժամանակ ուսուցանում է, որ բոլոր սոցիալիստական ազգերը դրան կարող են հասնել միայն անշեղ զարգացման ու բարգավաճման ճանապարհով։

«Ազգային հարցը և լենինիզմը» աշխատության մեջ ընկեր Ստալինը խոսելով սոցիալիստական ազգերի ապագայի մասին, ցույց է տալիս, որ այդ ազգերը շարունակելու են իրենց գոյությունը և զարգացում են ապ-

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 438

բելու ոչ միայն մեկ երկրում սոցիալիզմի և կոմունիզմի լիակատար կառուցման ժամանակաշրջանում, այլ նրանք երկար ժամանակ շարունակելու են իրենց զարգացումն ու առաջընթացը նաև համաշխարհային իմպերիալիզմի պարտությունից հետո։ Խոսելով այդ մասին, ընկեր Ստալինը գրում է. «Սխալ կլիներ կարծել, թե ազգային տարբերությունների ոչնչացումը և ազգային լեզուների մահացումը տեղի կունենա համաշխարհային իմպերիալիզմի պարտությունից հետո միանգամից, մեկ հարվածով, այսպես ասած, վերևից դեկրետավորելու կարգով։ Չկա ոչինչ ավելի սխալ բան, քան այդ հայացքը։ Փորձել ազգերի միաձուլում կատարել վերևից դեկրետավորելու միջոցով, հարկադրելու միջոցով,-կնշանակեր գործել իմպերիալիստների օգտին, կործանել ազգերի ազատագրության գործը, թաղել ազգերի համագործակցության ու եղբայրության գործը։ Այդպիսի քաղաքականությունը հավասարազոր կլիներ ասիմիլացիայի քաղաքականության»[1]։

Սոցիալիստական ազգերի զարգացման, նրանց հետագա բարգավաճման և ապագայում մեկ ժողովրդի մեջ միավորելու տեսակետից պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրայի ժամանակաշրջանն ընկեր Ստալինը բաժանում է երեք էտապների։ Առաջին էտապը լինելու է առաջներում ճնշված ազգերի ու ազգային լեզուների աճման և ծաղկման, ազգերի իրավահավասարության, ազգությունների միջև փոխադարձ անվստահության վերացման, նրանց ինտերնացիոնալ կապերի կարգավորման և ամրապնդման էտապ։ Երկրորդ էտապում իրենց լեզուների կողքին ազգերը կզգան միջազգային լեզու ունենալու անհրաժեշտությունը և կստեղծեն այդպիսին։ Այս էտապում ազգային լեզուները և միջազգային լեզուն գոյություն կունենան զուգահեռաբար։ «Հնարավոր է,—ասում է ընկեր Ստալինը,—որ սկզբում ստեղծվի ոչ թե բոլոր ազգերի համար մեկ ընդհանուր համաշխարհային տնտեսական կենտրոն մեկ ընդհանուր լեզվով, այլ մի քանի զոնալ տնտեսական կենտրոններ ազգերի առանձին խմբերի համար, ազգերի յուրաքանչյուր խմբի համար առանձին՝ ընդհանուր լեզվով, և միայն հետագայում այդ կենտրոնները միավորվելով՝ կկազմեն սոցիալիստական տնտեսության մեկ ընդհանուր համաշխարհային կենտրոն՝ բոլոր ազգերի համար մեկ ընդհանուր լեզվով»[2]։ Երրորդ էտապում, երբ սոցիալիզմը կմտնի ժողովուրդների կենցաղի մեջ և ազգերը գործնականում կհամոզվեն ընդհանուր լեզվի առավելությունների մեջ ազգային լեզվի նկատմամբ, միայն այն ժամանակ «ազգային տարբերություններն ու լեզուները կսկսեն մահանալ, իրենց տեղը զիջելով բոլորի համար ընդհանուր, համաշխարհային լեզվին»[3]։

Անդրադառնալով այդ նույն խնդրին, «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» դասական աշխատության մեջ ընկեր Ստալինը գրում է. «Այստեղ մենք գործ կունենանք ոչ թե երկու լեզվի հետ, որոնցից մեկը պարտություն է կրում, իսկ մյուսը պայքարից հաղթանակով է դուրս գալիս, այլ հարյուրավոր ազգային լեզուների հետ, որոնցից ազգերի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական երկարատև համագործակցության

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 394—395։
[2] Նույն տեղում, էջ 396 – 397։
[3] Նույն տեղում, էջ 397։

հետևանքով նախ կառանձնանան առավել հարստացած միասնական զոնալ լեզուները, իսկ հետո զոնալ լեզուները կմիաձուլվեն մեկ ընդհանուր միջազգային լեզվի մեջ, որը, իհարկե, չի լինի ոչ գերմաներեն, ոչ ռուսերեն, ոչ անգլերեն, այլ մի նոր լեզու, որն իր մեջ կներառնի ազգային ու զոնալ լեզուների լավագույն տարրերը»[1]։

Այստեղից էլ հասկանալի է, թե ինչու բոլշևիկների պարտիան և սովետական կառավարությունն ընկեր Ստալինի գլխավորությամբ հետևողականորեն իրականացնում են Սովետական Միության բոլոր սոցիալիստական ազգերի, այդ թվում նաև հայ ազգի, տնտեսական, քաղաքական և կուլտուրական բարգավաճման ու ծաղկման հաստատ քաղաքականությունը։

Դրանումն է կայանում ազգային հարցի դիալեկտիկան, որը հայտնագործել և հանճարեղորեն հիմնավորել է ընկեր Ստալինը։

Ինչպես տեսանք, մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ սոցիալիստական ազգերն արմատապես տարբերվում են բուրժուական ազգերից նաև իրենց հոգեկան կառուցվածքով։ «Բուրժուական նացիոնալիզմ և պրոլետարական ինտերնացիոնալիզմ,—գրել է Վ. Ի. Լենինը դեռևս 1913 թվականին «Քննադատական դիտողություններ ազգային հարցի մասին» հոդվածում,—սոսա երկու թշնամական-անհաշտ լոզունգներ, որ համապատասխանում են ամբողջ կապիտալիստական աշխարհի երկու մեծ դասակարգային լագերներին և արտահայտում են երկու քաղաքականություն (ավելին՝ երկու աշխարհայեցողություն) ազգային հարցումում»։ Լենինյան այս խոսքերը փայլուն կերպով ցույց են տալիս կապիտալիստական աշխարհի երկու հակամարտ դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի վերաբերմունքը դեպի ազգային հարցը։ Այդ խոսքերը միաժամանակ ցույց են տալիս հին, բուրժուական ազգերի և հետագայում սովետական կարգերում ձևավորված նոր, սոցիալիստական ազգերի հոգեկան կերպարը։ Նացիոնալիզմը, այդ շահագրգիռ դասակարգերի իդեոլոգիան է և քաղաքականությունը։ Իրենց իշխող դիրքերը պաշտպանելու նպատակով, շահագործող դասակարգերն ամեն կերպ ձգտում են նացիոնալիզմի, ձգտում են այդ թունոտ զենքի միջոցով անվստահություն ու ատելություն սերմանել ազգերի ու ժողովուրդների միջև, նրանց պայքարի հանել միմյանց դեմ։ Այդ քաղաքականությամբ նրանք միաժամանակ ձգտում են զավթել նոր տերիտորիաներ, ստրկացնել նոր ժողովուրդների՝ ընդարձակելով իրենց գաղութային տիրապետությունը։

Առանձնապես ներկայումս, երբ մարդկության ապագայի համար պայքար է գնում երկու լագերի՝ ՍՍՌՄ-ի գլխավորությամբ խաղաղության ու սոցիալիզմի լագերի և ԱՄՆ-ի իմպերիալիստների գլխավորությամբ պատերազմի հրձիգների ու ռեակցիայի լագերի միջև, ազգային հարցը բացառիկ կարևորություն է ստանում։

Ամերիկյան մագնատները, բոլոր ազգերի ու ժողովուրդների այդ կատաղի թշնամիները, ժառանգելով ֆաշիստական իդեոլոգիան, իրենց համաշխարհային տիրապետությունը հաստատելու մանիայով տարված, ներկայումս մոլեգին կերպով նախապատրաստում և նոր պատերազմ են հրա-

[1] Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Երևան, 1951 թ., էջ 123։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հատ. 20, Երևան, 1950 թ., էջ 13։

հրում աշխարհի ժողովուրդների միջև, պատերազմ, որը առաջին հերթին ուղղված է հաղթանակած սոցիալիզմի երկրի՝ մեր հզոր Սովետական Հայրենիքի դեմ։ Տնտեսական, տեխնիկական, ռազմական և այլ կարգի այսպես կոչված «օգնության» անվան տակ պատերազմի ամերիկյան հրձիգները իրենց զավթողական դիրքերն են ամրապնդում Հարավային Ամերիկայում, Աֆրիկայում, Արևմտյան Եվրոպայում և Ասիայի մի շարք երկրներում, այնտեղ փաստորեն հաստատելով իրենց իշխանությունը և կենսագործելով այդ երկրների ժողովուրդների ստրկացման քաղաքականությունը։ Տարվելով համաշխարհային տիրապետության ցնորքներով, աշխարհի տարբեր մասերում նրանք ստեղծում են իրենց ռազմական բազաները։

Այդ զավթողական քաղաքականությունը քողարկելու և այն արդարացնելու նպատակով ամերիկյան իմպերիալիստները իրենց ռեակցիոն գիտնականների օգնությամբ մոլեգին կերպով քարոզում են այն «թեորիան», ըստ որի ազգ, ազգային ինքնուրույնություն, ազգային սահմաններ, հայրենիք հասկացողությունները հնացել են։ Որա փոխարեն նրանք առաջ են քաշում կոսմոպոլիտիզմի իդեոլոգիան, որով կամենում են բթացնել ժողովուրդների զգոնությունը, թուլացնել և կազմալուծել նրանց պայքարն ընդդեմ ամերիկյան էքսպանսիայի, հանուն ազատության և դեմոկրատիայի։ Ռեակցիոն բուրժուազիայի հետ միասին այդ թեորիան ակտիվ կերպով քարոզում են նրա հլու ծառաները՝ բուրժուական նացիոնալիստները և աջ սոցիալիստները։ Ամերիկյան իմպերիալիստների ձեռքին գործիք են դարձել Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և մի շարք այլ երկրների բուրժուական ներկա կառավարությունները։

Ընդդեմ պատերազմի հրձիգների հարաճուն կերպով ընդլայնվում և ամրապնդվում է դեմոկրատիայի ու սոցիալիզմի լագերը, որի գլուխ կանգնած է սոցիալիստական ազգերի միասնական պետությունը, մեր հզոր Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միությունը՝ մեծ առաջնորդ ընկեր Ստալինի գլխավորությամբ։ Դեմոկրատիայի և սոցիալիզմի լագերի այդ հարաճուն աճման փայլուն օրինակը հանդիսանում է հինգ խոշոր պետությունների միջև խաղաղության պակտ կնքելու համար ծավալված հսկայական համաժողովրդական շարժումը աշխարհի բոլոր մասերում, շարժում, որի ընթացքում այդպիսի պակտ կնքելու օգտին առ մեկը հունվարի 1952 թ. ստորագրել են 600 միլիոն մարդ։

Սովետական Միության համաշխարհային-պատմական հաղթանակներով և նրա փորձով աշխարհի բոլոր աշխատավորները համոզված են, որ դեմոկրատիան ու սոցիալիզմն անհաղթահարելի են, որ ապագան պատկանում է կոմունիզմին։

Կուռ շարքերով համախմբված Լենինի-Ստալինի փառապանծ պարտիայի, մեր հաղթանակների կազմակերպիչ ու ոգեշնչող մեծ առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը, հզոր Սովետական Միության սոցիալիստական ազգերն ու ժողովուրդները հաստատ ու վճռական քայլերով առաջ են ընթանում դեպի կոմունիզմ։